

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Բնապահպանական և սոցիալական կառավարման կառուցվածք

**ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ և ՎԵՐԱՀՍԿՈՒՄ ԾՐԱԳԻՐ
և
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ և ՎԵՐԱՀՍԿՈՒՄ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ**

Երևան, դեկտեմբեր 2012
Վերանայված 2020 նոյեմբերին

Հապավումների ցանկ

ՀՀ -	Հայաստանի Հանրապետություն
ՓԲԸ -	Փակ բաժնետիրական ընկերություն
ՇՄԱԳ -	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ԲԿՊ -	Բնապահպանական կառավարման պլան
ԲԿԿ -	Բնապահպանական կառավարման կառուցվածք
ԱԾԻԳ -	Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ
ԲՄԿՊ -	Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան
ԲՄԿՊ -	Բնապահպանական և սոցիալական կառավարման կառուցվածք
ԲԿ -	Բժշկական կենտրոն
ԲՊՆ -	Բնապահպանության նախարարություն
ԱՆ -	Առողջապահության նախարարություն
ՈՎՀԿԿ -	Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում և կառավարում
ԱԱ -	Առաջնային առողջապահություն
ՊՄ -	Պինդ մասնիկներ
ՊՈԱԿ -	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՀԲ -	Համաշխարհային Բանկ
ԱՀԿ -	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ՈԻԱԿ -	Ուռուցքաբանության ազգային կենտրոն
ՇՄԱ -	Շրջակա միջավայրի ազդեցություն
ԳԲ -	Գենդերային բռնություն
ԲԳՄ -	Բողոքների վերլուծման մեխանիզմ
ԱԿՏՀ -	Առողջապահական կառավարման տեղեկատվական համակարգ
ԱԱՊ -	Առաջնային առողջության պահպանում
ՍՇԶ/ՍՌ -	Սեռական շահագործում և սեռական չարաշահում/սեռական ոտնձգություն
ՄՄԱ -	Մոր և մանկան առողջություն

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանը հսկայական դժվարությունների է բախվել: Դա հանգեցրեց հանրային ծառայությունների, այդ թվում՝ առողջապահական համակարգի պատշաճ տրամադրման ճգնաժամի: Անկախությունից ի վեր Հայաստանի առողջապահության ոլորտում կուտակված հիմնական խնդիրները համարվել են հետևյալը. առողջապահական ծառայությունների ցածր մատչելիություն և օգտվելու հնարավորություն; թերֆինանսավորվող առողջապահական համակարգը՝ սակավ և անհավասար օգտագործվող ռեսուրսներով. գրպանից ոչ ֆորմալ բարձր վճարումներ; բժշկական օգնության ցածր որակ, հատկապես մարզերում. հիվանդանոցների և պոլիկլինիկաների ֆիզիկական ենթակառուցվածքների ավելորդ ծավալ, ինչպես նաև բուժաշխատողների ռեսուրսների անհամաչափ բաշխում Երևանում և մարզերում:

Առողջապահության ոլորտի մարտահրավերներն էին՝ կայուն հիմունքներով առողջապահական ծառայությունների մատչելիության ապահովումը, հանրային առողջության ապահովման կառավարումը և մահացության հնարավոր կանխարգելումը, հիվանդանոցային հատվածում զգալի ավելորդ ծավալների նվազեցումը՝ միաժամանակ բարելավելով առաջնային բուժօգնության դերն ու որակը և ամրապնդելով պետության հիմնական գործառնություններն առողջապահության ոլորտում, մասնավորապես՝ կառավարման և որակի ապահովման ոլորտներում:

90-ականների կեսերին սկսված բարեփոխումների գործընթացը նպատակաուղղված էր անհրաժեշտ առողջապահական ծառայությունների արդյունավետության բարձրացմանը, մատչելիության և որակի ապահովմանը, մասնավորապես խոցելի խմբերի համար: Հայաստանի կառավարությունը փոփոխություններ է իրականացրել առողջապահության ոլորտում հետևյալ հիմնական ուղղություններով.

- Առաջնային առողջության պահպանման համակարգի բարելավում և հզորացում՝ շեշտը դնելով առողջության խթանման և հիվանդությունների կանխարգելման միջոցառումների վրա, որոնք ուղեկցվում են ընտանեկան բժշկության ներդրմամբ՝ առողջապահական ծառայությունների մատչելիության և արդյունավետության բարձրացման նպատակով:
- Կրկնվող և աշխատակազմի մեծ թվով առողջապահական ծառայությունների օպտիմիզացում՝ ուղղված բնակչության առողջապահական կարիքների բավարարմանն ու ծառայությունների որակի և մատչելիության բարձրացմանը:
- Առողջապահության ֆինանսավորման մոդելի մշակում՝ պետական ֆինանսավորմամբ իրականացվող առողջապահական ծառայությունների ֆինանսավորման թույլ կողմերը վերացնելու, ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների ներդրումը դիտարկելու, պաշտոնական ֆինանսավորման համակարգերն ամրապնդելու և ոչ ֆորմալ վճարումները բացառելու նպատակով:
- Կառավարության ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում և առողջապահական հաստատությունների կառավարման և ֆինանսական հաշվետվողականության բարելավում:

ՀԲ աջակցել է Հայաստանի Առողջապահության ֆինանսավորման և Առողջության առաջնային պահպանման զարգացման ծրագրին, որն իրականացվել է 1997-2003 թվականներին և զգալիորեն նպաստել է երկրի առողջապահական համակարգի բարեփոխումներին և հետագա զարգացման հաջողությանը: Դրանից հետո Հայաստանն իրականացրել է առողջապահական համակարգի արդիականացման երկփուլ վարկային ծրագիրը (HSMP)՝ շուրջ 8 տարի տևողությամբ: Ծրագրի նպատակն էր՝ աջակցություն Հայաստանում առողջապահության ոլորտի բարեփոխումներին երեք հիմնական ոլորտներում. ա) առաջնային առողջապահության օղակի զարգացում, բ) հիվանդանոցային համակարգի օպտիմալացում և արդիականացում, գ) կառավարության ինստիտուցիոնալ

կարողությունների հզորացում: Ծրագրի առաջին փուլը մեկնարկել է 2004 թ-ի դեկտեմբերին և ավարտվել 2010 թ-ի հունիսին: Ծրագրի երկրորդ փուլը մեկնարկել է 2007 թ-ի հունիսին և ավարտվել 2012 թ-ի դեկտեմբերին: Ծրագրի լրացուցիչ ֆինանսավորումը սկսվել է 2011 թ-ին և ավարտվել 2014 թ-ի դեկտեմբերին: Լրացուցիչ ֆինանսավորումը նպատակաուղղված էր ա) աջակցելու ԱԱՊ-ի հիման վրա ընտանեկան բժշկության ավելի արագ անցմանը, բ) ավարտելու մարզային հիվանդանոցային համկարգի արդիականացման գործընթացը և գ) նպաստելու համակարգի հետագա ինտեգրացիոնալ ամրապնդմանը:

2004 թ-ից ՀԲ-ի և զարգացման այլ գործընկերների աջակցությամբ կառավարությունը հաջողությամբ իրականացրել է հիվանդանոցային համակարգի օպտիմալացման և արդիականացման բարեփոխումների աշխատանքները: Մարզերի մեծ մասում արդյունավետության զգալի նվաճումներ են գրանցվել հիվանդանոցային ենթակառուցվածքների և ծառայությունների համախմբման և կրկնօրինակումների կրճատման միջոցով: Մահնակալների զբաղվածության ցուցանիշն ,սաճել է բոլոր մարզերում և Երևանում, և այժմ կազմում է 60%-ից ավել: Երևանում և մարզերում հիվանդանոցների օպտիմալացման ծրագրին զուգահեռ մեծ ներդրումներ էին իրականացվում նաև ենթակառուցվածքների, սարքավորումների և անձնակազմի վերապատրաստման ոլորտում:

Հայաստանի կառավարությունը 2013 թ-ի հուլիսի 15-ին գործարկել է ՀԲ-ի կողմից ֆինանսավորվող «Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ծրագիրը: Ծրագիրն աջակցում է առողջապահության ոլորտում ազգային առաջնահերթություններին՝ ուղղված տարածաշրջանային բժշկական կենտրոնների հետագա արդիականացմանը, ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելմանը, վաղ հայտնաբերմանը և վերահսկմանը: Համաշխարհային համաճարակի և Հայաստանում COVID 19 դեպքերի աճող թվի պատճառով, 2020 թ-ի ապրիլին կյանքի է կոչվել ծրագրի «Արտակարգ արձագանքում COVID-19-ին» բաղադրիչը:

2.ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1 Ծրագրի նպատակը

2020 թ-ի ապրիլին ծրագրի վերակազմավորման շրջանակներում «Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» վերանայված ծրագրի նպատակը հետևյալն է.

- ա) բարձրացնել ընտրված ոչ վարակիչ հիվանդությունների հայտնաբերումն ԱԱՊ մակարդակում և հղիների շրջանում,
- բ) բարելավել ընտրված հիվանդանոցների արդյունավետությունն ու որակը,
- գ) կանխել, հայտնաբերել և արձագանքել COVID-19-ի սպառնալիքներին:

2.2 Ծրագրի բաղադրիչները

Ծրագիրը բաղկացած է չորս բաղադրիչներից.

Բաղադրիչ 1. Կատարողականի վրա հիմնված ֆինանսավորում բուժաստատություններում ուղղված մոր և մանկան առողջության պահպանման և ոչ վարակիչ հիվանդությունների ծառայությունների բարելավմանը

Այս բաղադրիչն աջակցում է Հայաստանում առաջնային առողջապահության ոլորտում կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման ամրապնդմանը հետևյալ կերպ. ա) կատարողականի ցուցանիշների ավելացում կանանց նախաձեռնության շրջանում և չափահաս բնակչության շրջանում հիպերտոնիայի և շաքարախտի, ինչպես նաև արզանդի վզիկի քաղցկեղի սկրինինգի իրականացման ընթացքում; բ) արդյունքների, արձանագրությունների և ձեռնարկների մշակման և կիրառման միջոցով արդյունքների հաշվետվությունների, ստուգումների և հակավերահաստատման բոլոր ընթացակարգերի ստանդարտացում և գ) առողջապահության կառավարման տեղեկատվական համակարգի (HMIS) հզորացում՝ նոր ցուցանիշների վերաբերյալ հաշվետվությունների տեղադրման նպատակով:

Բաղադրիչ 2. Ընտրված հիվանդանոցների արդյունավետության և որակի բարձրացում

Այս բաղադրիչի շրջանակներում ծրագիրը ֆինանսավորում է ՀՀ ընտրված բժշկական հաստատությունների կառուցումը, բարեկարգումը և սարքավորումներով հագեցումը: Ի սկզբանե, ծրագիրը նպատակ ուներ աջակցել Լոռու մարզում Վանաձորի բժշկական կենտրոնի (ԲԿ) կառուցմանը և ապահովմանը ժամանակակից բժշկական սարքավորումներով և կահույքով: Նախատեսվում էր նաև աջակցել Արյունաբանական կենտրոնի վերակառուցման աշխատանքներին, Ոսկրածուծի փոխպատվաստման և բարձրդեղաչափային քիմիաթերապիայի բաժանմունքի ստեղծմանը և Հայաստանում ուռուցքաբանական ծառայությունների բարելավման համար ճառագայթային թերապիայի նոր կենտրոնի ստեղծմանը:

2015 թ-ին ծրագրի առաջին վերակազմավորման արդյունքում Վանաձորի ԲԿ-ի կառուցումը փոխարինվեց և նախատեսվեցին. ա) Արարատի մարզի Արտաշատի ԲԿ-ի վերակառուցումը, բժշկական սարքավորումներով, բժշկական կահույքով և պարագաներով հագեցումը, բ) Գեղարքունիքի մարզի Սևանի ԲԿ-ի կառուցումը և հագեցումը բժշկական սարքավորումներով, բժշկական կահույքով և պարագաներով: Նախատեսված էր նաև իրականացնել ծրագրի շրջանակներում փոփոխման չենթարկված գ) բժշկական սարքավորումների, բժշկական կահույքի և պարագաների տրամադրումը Մեղրու տարածաշրջանային ԲԿ-ին և դ) Վանաձորի ԲԿ-ին բժշկական սարքավորումների, բժշկական կահույքի և պարագաների մատակարարումը և կենտրոնի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի (ՆՆՓ) մշակումը:

2018 թ-ին՝ ծրագրի երկրորդ վերակազմավորումից հետո, Ուռուցքաբանության հայկական կենտրոնի (ACO) ստեղծումը փոխարինվեց և նախատեսվեցին. ա) Վայոց ձորի մարզային հիվանդանոցի կառուցման ՆՆՓ մշակումը, շինարարական աշխատանքները և բժշկական սարքավորումների, կահույքի և պարագաների մատակարարումը; բ) Գեղարքունիքի մարզի Մարտունու նոր ԲԿ-ի կառուցման ՆՆՓ մշակումը, շինարարական աշխատանքները, բժշկական սարքավորումների, կահույքի և պարագաների տրամադրումը:

Ծրագրի մեկ այլ վերակազմակերպումը, որը ստորագրվել է 2020 թ-ի մարտին, վերաբերվում է Վայոց ձորի մարզային հիվանդանոցի մեկհարկանի մոդուլային տիպի մասնաշենքի կառուցման շինարարական աշխատանքների բարձր գնահատված արժեքի պատճառով ծրագրից դուրս մնալուն:

Հաշվի առնելով COVID-19-ի արդյունքում առաջացած համաճարակային իրավիճակը, Հայաստանի կառավարությունը դիմեց ՀԲ-ին առաջարկով՝ վերաբաշխել այս բաղադրիչով նախատեսված գումարները COVID-19-ին արագ արձագանքման համար՝ ֆինանսավորելու ընտրված հիվանդանոցներին բժշկական պարագաների և սարքավորումների, անձնական պաշտպանության միջոցների տրամադրումը՝ Հայաստանում COVID-19-ի ախտորոշման և բուժման կարողությունների բարձրացման նպատակով (տե՛ս Բաղադրիչ 4):

Ծրագրի լրացուցիչ ֆինանսավորումը կաջակցի Մարտունու ԲԿ-ի և նախկինում պլանավորված Վայոց ձորի ԲԿ-ի կառուցմանը:

Մարտունու ԲԿ-ի նոր մասնաշենքի կառուցման շինարարական աշխատանքները մեկնարկել են 2020 թ-ի հուլիսին:

Բաղադրիչ 3. Ծրագրի կառավարում

Այս բաղադրիչն աջակցում է ծրագրի ամենօրյա կառավարմանը, ներառյալ ֆիդուցիար առաջադրանքները, բնապահպանական և սոցիալական երաշխիքների առաջադրանքները, մոնիտորինգը և գնահատումը: Այն կֆինանսավորի ծրագրի գործառնական ծախսերը, ներառյալ թարգմանության, սարքավորումների, վերահսկողության ծախսերը (փոխադրումներ և օրապահիկ), առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակի աշխատակազմի աշխատավարձերը և առողջապահության նախարարության լրացուցիչ գործառնական ծախսերը:

Բաղադրիչ 4. COVID-19-ին արագ արձագանքում

Կորոնավիրուսի նոր հիվանդության (COVID-19) բռնկումը, որն ի սկզբանե հայտնաբերվել էր 2019 թ-ի դեկտեմբերին Չինաստանում, շարունակում է անել առաջին անգամ հայտնաբերելուց ամիսներ անց: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) COVID-19-ը պաշտոնապես հռչակեց համաշխարհային համաճարակ 2020 թ-ի մարտի 11-ին: Հայաստանը հաղորդեց կորոնավիրուսի առաջին դեպքը 2020 թ-ի մարտի 1-ին: Covid-19-ի դեպքերի աճի հետ մեկտեղ ԱՀԿ-ն շարունակում է առաջարկել բոլոր երկրներին հիվանդության տարածման զսպումը համարել իրենց առավելագույն գերակայություն: Հաշվի առնելով Հայաստանում կորոնավիրուսով հիվանդների աճող թիվը, ազգային առողջապահական համակարգում առկա ծավալներն ու կարողությունները գնահատվել են անբավարար:

Հետևելով ՀՀ կառավարության աջակցման խնդրանքին՝ «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ծրագիրը վերակազմավորվեց՝ նոր բաղադրիչ ձևավորելու նպատակով, որը կֆինանսավորեր միջոցառումներ COVID-19-ը հայտնաբերելու և դրան արձագանքելու համար: Աջակցությունը կներառի հանրապետության հիվանդանոցներին բժշկական սարքավորումների և պարագաների տրամադրում՝ ըստ առանձնացված առաջնահերթ կարիքների: Այս բաղադրիչի ձևավորման պահին 10 հիվանդանոց Հայաստանի մարզերում նման աջակցության կարիք ունեն (կախված COVID-19 բռնկման իրավիճակից և առաջնահերթ կարիքներից՝ բուժհաստատությունների ցանկը կարող է փոփոխվել/ընդլայնվել ամբողջ հանրապետությունում):

COVID-19 բաղադրիչը կօժանդակի հետևյալ սարքավորումների և պարագաների ձեռքբերմանը (կախված COVID-19 բռնկման իրավիճակից և առաջնահերթ կարիքներից, բժշկական սարքավորումների և այլ ապրանքների ցանկը կարող է փոփոխվել/ընդլայնվել ամբողջ երկրում; COVID-19-ի բռնկումը հաղթահարված համարելուց հետո, սարքավորումները և ապրանքները կարող են վերաբաշխվել պետական առողջապահական հաստատություններում):

Աղյուսակ 2.1. Ինտենսիվ թերապիայի բաժանմունքի համար անհրաժեշտ բժշկական բժշկական սարքավորումների ցանկ

№	Սարքերի անվանում
1	Բժշկական գազերի կենտրոնացված համակարգ
2	Պացիենտի մոնիտոր
3	Պացիենտի մոնիտոր կապնոգրաֆով
4	Թոքերի արհեստական շնչառության սարք
5	Ներարկչի պոմպ
6	Թթվածնի կայան
7	Շարժական ռենտգեն սարք
8	Շարժական ուլտրաձայնային հետազոտման սարք՝ 3 տվիչով
9	Էլեկտրասրտագրման սարք
10	Արյան գազային վերլուծիչ
11	Լարինգոսկոպ
12	Մաքրող միջոցներ-ռեցիրկուլյատորներ
13	Ինտուբացիոն հավաքածու
14	Թթվածնային հոսքաչափ խոնավացուցիչով
15	Պուլսօքսիմետր

Աղյուսակ 2.2. «Հիվանդությունների վերահսկում և պահպանում ազգային կենտրոն»-ի համար անհրաժեշտ բժշկական պարագաներ և սարքավորումներ

№	Սարքերի/պարագաների անվանում
1	Պաշտպանական ակնոցներ վահաններով
2	Դիմակ N 95, FFP 2/3
3	Ինֆրակարմիր հեռահար ջերմաչափեր
4	Հատուկ պաշտպանիչ համազգեստ
5	Ավտոմեքենա 4 WD արագ արձագանքման համար
6	Արագ արձագանքման շտապ օգնության մեքենա

2.2 Ծրագրի ենթակառուցվածքը

Ծրագիրը ֆինանսավորում է ներդրումները առողջապահական համակարգի ենթակառուցվածքների բարելավման և տեխնիկական աջակցության ոլորտներում: Իրականացվել են հետևյալ շինարարական աշխատանքները.

ՀՀ Արարատի մարզի Արտաշատի ԲԿ-ի վերակառուցում՝ ավարտված է;

ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի ԲԿ-ի նոր մասնաշենքի կառուցում՝ ավարտված է;

Պրոֆ.Յոյանի անվան արյունաբանական կենտրոնի վերակառուցում Երևան քաղաքում՝ ավարտված է;

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու ԲԿ-ի կառուցում;

ՀՀ Վայոց ձորի մարզային նոր հիվանդանոցի կառուցում Եղեգնաձոր քաղաքում:

3. ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐ

3.1. Ազգային օրենսդրություն

ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածը (ընդունվել է 1995-ին և փոփոխվել է 2005-ին և 2015-ին) սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, վերարտադրման և բնական ռեսուրսների պատշաճ օգտագործման համար: Անկախությունից ի վեր ՀՀ-ն ընդունել է մի շարք օրենքներ, որոնք կարգավորում են բնապահպանական խնդիրները:

- **Հողային օրենսգիրք (2001)**

Հողային օրենսգիրքը սահմանում է հիմնական դիրեկտիվները հողօգտագործման կառավարման համար, ներառյալ տարբեր նպատակներով հատկացվածներ, ինչպիսիք են՝ գյուղատնտեսությունը, քաղաքաշինությունը, արդյունաբերությունը և հանքարդյունաբերությունը, էներգիայի արտադրությունը, հաղորդման և հաղորդակցության համակարգերը, տրանսպորտը և այլ նպատակներ: Օրենսգիրքը սահմանում է ինչպես հատուկ պահպանվող տարածքներին ենթակա հողերը, այնպես էլ այլ պահուստային հողերը: Վերջինս սահմանում է նաև հողի պահպանությանն ուղղված միջոցառումները և հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների իրավունքները:

- **Ջրային օրենսգիրք (2002)**

Ջրային օրենսգրքի հիմնական նպատակը երկրի ջրային ռեսուրսների պաշտպանության, քաղաքացիների և տնտեսական հատվածների ջրային կարիքների բավարարման իրավական հիմքի ապահովումն է՝ ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման և գալիք սերունդների համար ջրային ռեսուրսների պաշտպանության ապահովման միջոցով: Օրենսգիրքը կարգավորում է հետևյալ ասպեկտները՝ պետական/տեղական իշխանությունների և հասարակության պարտականություններ, ջրի ազգային քաղաքականության և ջրի ազգային ծրագրի մշակում, ջրային ռեսուրսների ռեգիստրի և մոնիտորինգի համակարգ, հասարակության համար համապատասխան տեղեկատվության մատչելիություն, ջրի օգտագործման և թույլտվության համակարգեր,

անդրսահմանային ջրային ռեսուրսների օգտագործում; ջրի որակի ստանդարտներ; ջրային ռեսուրսների պահպանում և պետական վերահսկողություն:

- **Հանքարդյունաբերության օրենսգիրք (2011)**

Օրենսգիրքը սահմանում է ՀՀ-ում հանքարդյունաբերության սկզբունքներն ու կանոնները, հանքային ավանդների պահպանման և օգտագործման հետ կապված կարգավորումները, արդյունավետ օգտագործման պայմանները և պահանջները, ավանդների բարդ օգտագործումը և պահպանումը, հանքարդյունաբերության անվտանգությունը և շրջակա միջավայրը դրա բացասական ազդեցությունից պաշտպանելը, ինչպես նաև պետության, քաղաքացիների և հանքային ավանդների օգտագործողների իրավունքների պաշտպանությունը: Համաձայն օրենսգրքի, բնական հանքավայրերը պետության բացառիկ սեփականության տակ գտնվող տարածքներ են: Դրանք կարող են տրվել օգտագործման որոշակի ժամանակահատվածում և չեն կարող սեփականաշնորհվել: Օրենքը սահմանում է նաև բնական պաշարների և հանքավայրերի պայմանները, պահանջները և առանձնահատկությունները, ինչպես նաև սահմանում է վճարման սկզբունքները, փոխհատուցումը, մոնիտորինգը և հանքարդյունաբերության գործունեության սահմանափակումները:

- **Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք (2014)**

Օրենքն ապահովում է առաջարկվող գործունեության կամ հայեցակարգային փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության իրավական հիմք, ինչպես նաև ներկայացնում է Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) գործընթացի ստանդարտ քայլերը: Օրենքը սահմանում է տարբեր տեսակի գործունեության պարտադիր ՇՄԱԳ-ի իրականացման և ոլորտային զարգացման հայեցակարգային փաստաթղթերի ընդհանուր իրավական և կազմակերպական սկզբունքները: Առաջարկվող գործողությունները դասակարգվում են երեք կատեգորիաների, որոնք արտացոլում են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման տարբեր մակարդակներ՝ ըստ հնարավոր շրջակա միջավայրի ազդեցության: Մույն օրենքի 14-րդ հոդվածում նշված գործողությունների ցանկի համաձայն՝ 1500մ² տարածք գերազանցող շինարարությունն ենթակա է փորձաքննության՝ պարզեցված ընթացակարգով:

- **ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենք (1992)**

Օրենքը սահմանում է բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական և ինստիտուցիոնալ հիմքերը, ինչպես նաև պետության կողմից նախատեսված այլ երաշխիքներ՝ մարդկանց վրա անբարենպաստ և վտանգավոր գործոնների ազդեցությունը բացառելու և ներկա ու ապագա սերունդների կենսունակության բարենպաստ պայմաններ ապահովելու համար:

- **Մթնոլորտային օդի պաշտպանության մասին օրենք (1994)**

Օրենքի նպատակն է ապահովել մթնոլորտային օդի մաքրությունը, մթնոլորտային օդի վրա բացասական ազդեցության վերացումը և կանխումը, ինչպես նաև այս ոլորտում հասարակության հետ փոխադարձ կապի կարգավորումը: Օրենքը սահմանում է թույլատրելի կոնցենտրացիայի և ֆիզիկական բացասական ազդեցության նորմերը, ինչպես նաև շարժական և անշարժ աղբյուրներից թույլատրելի աղտոտման նորմերը:

- **Բնակչության բժշկական օգնության և ծառայությունների մասին օրենք (1996)**

Օրենքը սահմանում է բժշկական օգնության և ծառայությունների մատուցման իրավական, տնտեսական և ֆինանսական ուղեցույցները, որոնք ապահովում են մարդկանց առողջությունը պահպանելու սահմանադրական իրավունքի իրացումը:

- **Մշակութային և պատմական ամրագրվող հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին օրենք (1998)**

Օրենքն ապահովում է իրավական և քաղաքական հիմքեր Հայաստանում հուշարձանների պահպանության և օգտագործման համար և կարգավորում պահպանության և օգտագործման գործունեության միջև կապերը:

Օրենքի 15-րդ հոդվածը նկարագրում է հուշարձանների հայտնաբերման և պետական գրանցման, դրանց շրջակայքում պահպանվող գոտիների գնահատման և պատմամշակութային արգելոցների ստեղծման ընթացակարգերը: 22-րդ հոդվածը պահանջում է լիազորված մարմնի (Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչություն) հաստատում, նախքան հուշարձաններ ունեցող տարածքներում հողամասեր տրամադրելը՝ շինարարության, գյուղատնտեսության և այլ տեսակի գործունեության նպատակով:

- **Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին օրենք (2006)**

Սույն օրենքը սահմանում է բնության պահպանության վճարների դրույքաչափերը և դրանց հաշվարկման մեխանիզմը: Օրենքը սահմանում է ՀՀ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից օգտագործվող և սեփականություն հանդիսացող մեքենաներից օդ վնասակար նյութերի արտանետման վճարների դրույքաչափերը: Ավելի բարձր դրույքաչափեր են սահմանվել Երևանի և հատուկ պահպանվող տարածքների համար: Օրենքը սահմանում է դեպի ջրավազան վնասակար նյութերի և համադրությունների արտանետման վճարների դրույքաչափերը:

- **Բուսական աշխարհի մասին օրենք (1999)**

Օրենքը սահմանում է բուսական աշխարհի պահպանման, պաշտպանության, օգտագործման և վերականգնման բնագավառում ՀՀ պետական քաղաքականությունը: Օրենքը սահմանում է բուսական աշխարհի փորձաքննության, պետական մոնիտորինգի, պետական գույքագրման, բուսական աշխարհի կարմիր գրքի մշակման պահանջներն ու մոտեցումները, պայմանները, առանձնահատկությունները, բուսական աշխարհի օբյեկտների նպատակային օգտագործման հատկացման սահմանափակումները, օգտագործման իրավունքի դադարեցման հիմքը, դրույթներ բուսական աշխարհի պահպանման և տնտեսական աջակցության՝ օգտագործման և վերահսկողության իրականացման նպատակով:

- **Կենդանական աշխարհի մասին օրենք (2000)**

Օրենքը սահմանում է կենդանական աշխարհի պահպանման, պաշտպանության, օգտագործման և վերականգնման բնագավառում ՀՀ պետական քաղաքականությունը: Օրենքը սահմանում է կենդանական աշխարհի հետազոտման, պետական մոնիտորինգի, պետական գույքագրման նպատակները, կենդանական աշխարհի վերաբերյալ կարմիր գրքերի մշակման պահանջները և մոտեցումները, պայմանները, առանձնահատկությունները, կենդանական աշխարհի օբյեկտների նպատակային օգտագործման տեղաբաշխման սահմանափակումները, օգտագործման իրավունքի դադարեցման հիմքը, դրույթներ կենդանական աշխարհի պահպանման, ինչպես նաև տնտեսական աջակցության՝ օգտագործման և վերահսկողության իրականացման նպատակով:

- **Թափոնների մասին օրենք (2004)**

Օրենքը կարգավորում է իրավական և տնտեսական հարաբերությունները՝ կապված հավաքագրման, տեղափոխման, պահպանման, մշակման, ծավալների կրճատման, մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման հետ: Օրենքը սահմանում է թափոնների օգտագործման օբյեկտները, պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն ու ուղղությունները, պետական ստանդարտացման, գույքագրման և վիճակագրական տվյալների ներդրման, դրանց պահանջների և մեխանիզմների իրականացումը, թափոնների վերամշակման սկզբունքները, թափոնների ներկայացման պահանջները, պետական մոնիտորինգի, թափոնների քանակի նվազեցմանն ուղղված գործողությունները, այդ թվում՝ բնօգտագործման վճարների, նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից թափոնների օգտագործմամբ մարդու առողջությանը և շրջակա միջավայրին հասցված վնասների հատուցման, ինչպես նաև պահանջների պետական մոնիտորինգը և իրավական խախտումները:

- **Բնապահպանական վերահսկողության մասին օրենք (2005)**

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնապահպանական օրենսդրության կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպման և կիրառման խնդիրները և սահմանում է իրավական և տնտեսական հիմքերը, որոնք հիմնված են վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների և հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության վրա:

- **Հատուկ պահպանվող բնական տարածքների մասին օրենք (2006)**

Սույն օրենքը սահմանում է հանրապետության բնության հատուկ պահպանվող բնական տարածքների, մշակման, վերականգնման, պահպանման, վերաստեղծման և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմքը և փոխհարաբերությունները: Օրենքի համաձայն, հատուկ պահպանվող բնական տարածքները բաժանված են ա) չորս կատեգորիաների՝ Պետական արգելավայրեր, Ազգային պարկեր, Պետական արգելոցներ և Բնական հուշարձաններ, ինչպես նաև բ) երեք առանձին տիպերի՝ միջազգային, ազգային և տեղական նշանակության տարածքներ:

- **Բուսական և կենդանական աշխարհին բնապահպանական խախտումների արդյունքում պատճառված վնասի փոխհատուցման դրույքաչափերի մասին օրենք (2005)**

Սույն օրենքը սահմանում է բուսական և կենդանական աշխարհին բնապահպանական խախտումների արդյունքում պատճառված վնասի փոխհատուցման դրույքաչափերը, ինչպես նաև այդ սակագների հաշվարկման և հավաքագրման կարգը:

- **ՀՀ աշխատանքային օրենսգիրք (2004)**

Սույն օրենքը կարգավորում է այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ աշխատանքային հարաբերությունները; գործատուների և աշխատողների կազմակերպությունները; կոլեկտիվ պայմանագրերը; գործադուլները; աշխատանքային պայմանագիրը; աշխատանքի անվտանգությունը և առողջությունը; աշխատանքային ժամը և արտաժամյա աշխատանքը; հանգստի ժամանակաշրջանները, պետական տոները և տարեկան արձակուրդները, դեկրետային արձակուրդը; աշխատավարձը և կարգապահական տույժերը: Օրենքը սահմանում է գործատուի պարտավորությունները, որոնք վերաբերում են՝ անվտանգ աշխատանքային պայմաններին, կոլեկտիվ և անձնական կանխարգելիչ միջոցառումներին, աշխատողների պաշտպանությանը վտանգավոր քիմիական նյութերի ազդեցությունից, պարտադիր բժշկական հետազոտություններին; դասընթացներին աշխատանքի անվտանգության խնդիրներին, սանիտարական հարմարություններին, աշխատողների մասնակցությանը կանխարգելիչ միջոցառումների իրականացմանը, առաջին օգնությանը, 18 տարեկանից ցածր աշխատողներին, մայրության պաշտպանությանը, հաշմանդամ աշխատողներին և աշխատանքային պատահարների ու մասնագիտական հիվանդությունների մասին ծանուցումներին: Աշխատանքային օրենսգրքի 260-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած աշխատող, որը վթարի է ենթարկվում աշխատավայրում կամ ունենում է սուր մասնագիտական հիվանդություն, վկաների հետ միասին, պետք է անհապաղ տեղեկացնի դրանց մասին բաժնի պետին, գործատուին և աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման բաժնին: Մասնագիտական հիվանդությունները և դժբախտ պատահարներն ենթակա են գործատուի կողմից պարտադիր գրանցման:

3.2 Արտոնագրեր և թույլտվություններ, որոնք պետք է ձեռք բերվեն ծրագրի նախաձեռնողի և կապալառուի կողմից

Նախագծման / Շինարարական աշխատանքների փուլ

- Արտոնագիր կապիտալ շինարարության տարածքում, ներառյալ քաղաքաշինության, ինժեներական հետազոտությունների և փորձաքննության փաստաթղթերի մշակում, որը պետք է ունենա նախագծող ընկերությունը,
- Արտոնագիր կապիտալ շինարարության տարածքում, որը պետք է ունենա աշխատանքներ իրականացնող շինարարական ընկերությունը,
- Շինարարության թույլտվություն,

- Բնապահպանության նախարարության կողմից տրված բժշկական հաստատության կառուցման դրական եզրակացություն (անհրաժեշտության դեպքում): Նման եզրակացությունը պահանջվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքին համապատասխան (2014),
- Համապատասխան քաղաքապետարանի կողմից համաձայնեցված հաստատված աղբավայրերի թույլտվություն՝ պեղված նյութերի և շինարարական թափոնների հեռացման համար, որը պետք է ձեռք բերվի շինարարության կապալառուի կողմից մինչև շինարարական բետոնե բեկորների, այլ տիպի բեկորների և հողի, ինչպես նաև հողային աշխատանքների ընթացքում ավելցուկային նյութերի տեղափոխումը,
- Անշարժ գույքի օգտագործողի իրավունքների պետական գրանցման վկայագիր:

Գործունեության փուլ

- Վտանգավոր բժշկական թափոնների տեխնիկական անձնագրեր պետք է մշակվեն բժշկական հաստատության կողմից և հաստատվեն Բնապահպանության նախարարության կողմից: Թափոնների անձնագիրը պարունակում է տվյալներ կազմի, քանակի, վտանգավորության մասին, ինչպես նաև տեղեկություններ պահպանման, փոխադրման կամ վնասագերծման մեթոդների վերաբերյալ: Բժշկական հաստատություններում առաջացած թափոնների ցանկը և դրանց դասակարգման ծածկագրերը ներկայացված են Հավելված 5-ում,
- Բժշկական հաստատության և հատուկ լիցենզավորված ընկերության միջև բժշկական թափոնների հանձնման և վերացման համաձայնագիր,
- Բժշկական հաստատությունների ջրի սպառման ստանդարտների և նորմերի նախագծերը պետք է ներկայացվեն Բնապահպանության նախարարության հաստատմանը:

3.3 Միջազգային պայմանագրեր

ՀՀ-ի կողմից կնքված միջազգային պայմանագրերից բացի, «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ծրագրի նպատակների համար ամենակարևորն են՝ «Վտանգավոր թափոնների անդրասահմանային տեղաշարժերի վերահսկման և դրանց հեռացման մասին» Բազելի կոնվենցիան (ՀՀ-ն կողմ է 1999 թվականից) և Օրիուսի կոնվենցիան՝ Տեղեկատվության հասանելիության, հասարակության մասնակցության որոշումների կայացման գործընթացում և արդարադատության մատչելիության վերաբերյալ բնապահպանական հարցերում (ՀՀ-ն՝ 2001 թ-ից):

3.4 Ինստիտուցիոնալ հիմքեր

Այս բաժնում հակիրճ ներկայացվում են այն կազմակերպությունների դերերը, որոնք կարող են ներգրավվել հիմնականում «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ծրագրում, բայց ոչ բացառապես բնապահպանական տեսանկյունից:

Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ

ԱԾԻԳ-ն ընդհանուր պատասխանատվություն է կրում սույն ԲՄԿ-ի ներքո գտնվող բոլոր գործողությունների դիտարկման և վերահսկման համար: ԱԾԻԳ-ն առաջնորդելու, վերահսկելու և հաշվետվություն է ներկայացնելու բաղադրիչների առաջընթացի մասին, ինչպես նաև կարգավորելու է բնապահպանական և սոցիալական խնդիրները, որոնք պահանջում են միջոցառումներ և համակարգում կենտրոնական կառավարության մակարդակով:

ԱԾԻԳ-ը կիրականացնի ենթածրագրերի առաջարկների բնապահպանական սկրինինգ, դրանք կդասակարգի ըստ բնապահպանական կատեգորիաների, կգնահատի ենթածրագրերի բնապահպանական և սոցիալական ազդեցությունները և կսահմանի առաջարկվող մեղմացնող միջոցառումների համարժեքությունը:

Բնապահպանության նախարարություն

Բնապահպանության նախարարությունը մշակում և իրականացնում է ՀՀ քաղաքականությունը շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների կայուն օգտագործման բնագավառներում, որոնք ներկայացվում են նախարարի և նախարարության աշխատակազմի կողմից: Նախարարության համակարգում կան նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններ (ՊՈԱԿ) և հիմնարկներ:

Բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության կենտրոն» ՊՈԱԿ-ն իրականացնում է բնապահպանական գնահատում նախագծային փաստաթղթերի՝ կառուցման/վերակառուցման, ընդլայնման և պահպանման արդյունաբերության հետ կապված արտադրական ստորաբաժանումների, օժանդակ օբյեկտների և ենթակառուցվածքների, այդ թվում թափոնների օգտագործման (համաձայն ազգային օրենսդրության և վավերացված միջազգային պայմանագրերի), և տալիս է փորձագրտական եզրակացություններ:

Բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության դիտարկման և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ն իր դիտարկման հասկարգի միջոցով վերահսկում է ջրի և օդի որակը երկրի տարբեր տարածքներում:

Ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունը ջրային ռեսուրսների կառավարման պատասխանատու հիմնական հաստատությունն է, որն իրականացնում է ջրային ազգային քաղաքականության և ջրային ազգային ծրագրի մշակում, ջրային ռեսուրսների դասակարգում ըստ դրանց օգտագործման նպատակի, մասնակցում է ջրային ստանդարտների մշակմանը և վերահսկում դրանց կիրառումը, տրամադրում ջրօգտագործման թույլտվություններ և այլն: *Ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունը բոլոր կազմակերպությունների համար սահմանում է ջրօգտագործման և արտանետման սահմանափակումները:*

Առողջապահության նախարարություն

Առողջապահության նախարարությունը (ԱՆ) գործադիր իշխանության պետական մարմին է, որը մշակում և իրականացնում է ՀՀ կառավարության քաղաքականությունը առողջապահության ոլորտում: ԱՆ-ն իրականացնում է առողջապահության կառավարման քաղաքականության և պետական ծրագրերի մշակման և կազմակերպման, սանիտարական նորմերի ու կանոնների մշակման և հաստատման գործառնությունները, ինչպես նաև առողջապահության ոլորտին վերաբերող օրենքների և կանոնակարգերի կատարման վերահսկումը:

Կառավարության կողմից ԱՆ-ն նշանակվում է որպես ՀԲ-ի կողմից ֆինանսավորվող «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ծրագիրն իրականացնող մարմին: Նախարարությանն աջակցում է Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակը (ԱԾԻԳ): ԱԾԻԳ-ը պատասխանատու է ծրագրի բնապահպանական և սոցիալական համապատասխանության համար:

Բնապահպանության և հանքային ռեսուրսների տեսչություն

ՀՀ կառավարությանն առընթեր բնության պահպանության և հանքային ռեսուրսների տեսչությունը ներառում է 11 տարածաշրջանային տեսչություն և վերահսկում է բնական ռեսուրսների պաշտպանության, օգտագործման և վերականգնման օրենսդրական և կարգավորիչ ստանդարտների իրականացումը: տեսչությունն իրականացնում է նաև շրջակա միջավայրի ստուգումներ աշխատավայրերում՝ բնապահպանական միջոցառումների և վավեր թույլտվությունների վերահսկման նպատակով:

4. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ ԵՎ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄՆԵՐ

4.1. Ազգային տեխնիկական ստանդարտներ

- ՀՀ առողջապահության նախարարի 2002 թ-ի մայիսի 6-ի N 138 հրամանը՝ աշխատավայրերում, հասարակական և բնակելի շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում աղմուկի N2 - III - 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին:
- ՀՀ առողջապահության նախարարի 2008 թ-ի մարտի 4-ի N 03-Ն հրամանը՝ բժշկական թափոնների կառավարման N 2.1.3-3 սանիտարական կանոններն ու նորմերը հաստատելու մասին:
- ՀՀ առողջապահության նախարարի 2010 թ-ի հունվարի 25-ի N 01-Ն հրամանը՝ Հողի որակի հիգիենայի պահանջների N 2.1.7.003-10 սանիտարական կանոններն ու նորմերը հաստատելու մասին:
- ՀՀ առողջապահության նախարարի N 533-Ն 2006 թ-ի մայիսի 17-ի հրամանը՝ աշխատավայրերում, բնակելի և հասարակական շենքերում HN N 2.2.4- 009-06 թրթռման հիգիենայի նորմերը հաստատելու մասին:
- ՀՀ կառավարության 2006 թ-ի մայիսի 29-ի N 750-Ն որոշումը՝ Վերամշակման պահանջների և վերամշակման ենթակա հողերի դասակարգման համար տեխնիկական կանոնակարգեր սահմանելու մասին:

4.2. Համաշխարհային բանկի պաշտպանության քաղաքականություն

Համաշխարհային բանկի OP / BP 4.01 շրջակա միջավայրի գնահատումը համարվում է հովանու քաղաքականությունն Բանկի բնապահպանական քաղաքականության համար: Կան նաև մի շարք սոցիալական երաշխիքներ և այլ պաշտպանական քաղաքականություններ, որոնք ՀԲ աջակցությամբ իրականացվող ծրագրերը կարող է խթանել: Պաշտպանության քաղաքականությունը և դրանց խթանները բերված են ստորև աղյուսակում.

Գործառնական քաղաքականություն	Խթանում
Ծրջակա միջավայրի գնահատում (OP 4.01)	Եթե նախագիծը, հնարավոր է, ունենա պոտենցիալ (անբարենպաստ) բնապահպանական ռիսկեր և ներգործություն իր ազդեցության գոտում
Անտառներ (OP 4.36)	Անտառային ոլորտի գործունեությունը և Բանկի կողմից հովանավորվող այլ միջոցառումներ, որոնք կարող են զգալի ազդեցություն ունենալ անտառածածկ տարածքների վրա
Կամավոր վերաբնակեցում (OP 4.12)	Ֆիզիկական վերաբնակեցում և հողերի կորուստ, որի արդյունքում ա) ապաստանի տեղափոխում կամ կորուստ, բ) ակտիվների կամ ակտիվների հասանելիության կորուստ, գ) եկամտի աղբյուրների կամ ապրուստի միջոցների կորուստ՝ անկախ նրանից՝ տուժած մարդիկ պետք է տեղափոխվեն այլ վայր, թե ոչ
Բնիկ ժողովուրդներ (OP 4.10)	Եթե ծրագրի տարածքում կան բնիկ ժողովուրդներ, և կանխատեսվում են հնարավոր անբարենպաստ ազդեցություններ բնիկ ժողովուրդների վրա, և բնիկ ժողովուրդները նախատեսված շահառուների թվում են
Ամբարտակների անվտանգությունը (OP 4.37)	Եթե ծրագրով նախատեսվում է մեծ ամբարտակի (15 մ կամ ավելի բարձր) կամ բարձր վտանգավոր ամբարտակի կառուցում: Եթե ծրագիրը կախված է գոյություն ունեցող պատենշից կամ կառուցվող ամբարտակից

Վնասատուների կառավարում (OP 4.09)	Եթե նախատեսվում է թունաքիմիկատների ձեռքբերում; եթե ծրագիրը կարող է ազդել վնասատուների կառավարման վրա այնպես, ինչպես կարող էր վնաս հասցվել, չնայած որ ծրագիրը նախատեսված չէ թունաքիմիկատների ձեռքբերման համար: Սա ներառում է ծրագրեր, որոնք կարող են ա) հանգեցնել էապես թունաքիմիկատների օգտագործման և առողջության և շրջակա միջավայրի ռիսկերի հետագա աճի, բ) պահպանել կամ ընդլայնել վնասատուների կառավարման ներկա պրակտիկան, որը կայուն չէ, և / կամ առողջության կամ շրջակա միջավայրի համար զգալի ռիսկեր են առաջացնում էական առողջություն է կամ շրջակա միջավայրի ռիսկերը
Ֆիզիկական մշակութային ռեսուրսներ (OP 4.11)	Քաղաքականությունն իրականացվում է այն ծրագրերի միջոցով, որոնք, առաջին հերթին, ենթադրում են մշակութային արժեքների վնասման ռիսկ (օր. ցանկացած ծրագիր, որը ներառում է լայնածավալ պեղումներ, հողի շարժում, մակերեսային շրջակա միջավայրի փոփոխություններ կամ քանդում)
Բնական բնակավայրեր (OP 4.04)	Քաղաքականությունն իրականացվում է ցանկացած ծրագրի կողմից, որը կարող է առաջացնել բնական միջավայրի զգալի վերափոխում (կորուստ) կամ դեգրադացիա՝ ուղղակիորեն (շինարարության միջոցով) կամ անուղղակիորեն (ծրագրով պայմանավորված մարդկային գործունեության միջոցով)
Ծրագրեր վիճելի տարածքներում (OP 7.60)	Քաղաքականությունը սկսվում է, եթե առաջարկվող ծրագիրը կլինի «վիճելի տարածքում»
Ծրագրեր միջազգային ջրուղիներում (OP 7.50)	Եթե ծրագիրը գտնվում է միջազգային ջրային ճանապարհի վրա, ինչպիսիք են՝ ցանկացած գետ, ջրանցք, լիճ կամ նմանատիպ ջրային մարմին, որը սահմանին է երկու կամ ավելի պետությունների (կամ ցանկացած վտակ կամ մակերևութային ջրի այլ մարմին, որը այս ջրատարի բաղադրիչն է), ցանկացած ծովախորշ, ծոց, նեղուց կամ միջանցք, որոնք սահմանափակված են երկու կամ ավելի պետություններով կամ, եթե մեկ պետության սահմաններում են, ճանաչվում են որպես բաց ծովի և այլ պետությունների միջև անհրաժեշտ հաղորդակցության ուղի

5. ԾՐԱԳՎԿԱ ՄԻՋՎՎԱՅՐԻ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԸ և ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1 Համաշխարհային բանկի պահպանության կիրառելի քաղաքականություն

Ծրագիրն իր մեջ ներառում է ներդրումային բաղադրիչներ՝ բժշկական հաստատությունների կառուցմանը և վերակառուցմանը, ինչպես նաև բժշկական սարքավորումների և պատճառների մատակարարմանն աջակցելու համար, և, հետևաբար, նախաձեռնում է OP / BP 4.01 շրջակա միջավայրի գնահատում: Նախատեսված է, որ ծրագրի կողմից աջակցվող որևէ գործողություն չի ունենա էական, երկարաժամկետ և անդառնալի ազդեցություն բնական միջավայրի վրա, ուստի նախագիծը դասվում է որպես Բ բնապահպանական կատեգորիա:

Ծրագրի ԲԿԿ-ն ի սկզբանե պատրաստվել էր՝ ղեկավարելու Վանաձորի բժշկական կենտրոնի և Հայաստանի ուռուցքաբանության կենտրոնի շինարարական աշխատանքների բնապահպանական ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) անցկացումը: Ծրագրի վերակազմավորումից հետո մշակվել են բնապահպանական կառավարման պլաններ (ԲԿՊ) Արարատի մարզի Արտաշատի ԲԿ-ի և Երևանի Արյունաբանական կենտրոնի վերակառուցման, ինչպես նաև Գեղարքունիքի մարզի Սևանի ԲԿ-ի կառուցման համար: ԲԿՊ-ները համարվել են բավարար՝ այդ միջամտությունների հետ կապված բնապահպանական ռիսկերը համարժեք մեղմելու համար, որոնք բնորոշ են

քաղաքային պայմաններում միջին չափի առկա/նորակառույց շենքերի վերակառուցման/կառուցման համար: Մույն ԲԿԴ/ԲՄԿԴ-ների մշակումը առաջնորդվել է ծրագրի ԲԿԿ-ով, որը հաստատվել է 2012-ի դեկտեմբերին, քանի որ դրանք մշակվել էին մինչև ԲՄԿԿ-ի այս փաստաթղթի արդի թարմացումը:

Ծրագրի բնապահպանական և սոցիալական մոնիտորինգի միջոցառումները ենթադրում են բնապահպանական և սոցիալական վերահսկողության ինտեգրում աշխատանքի ընդհանուր տեխնիկական վերահսկողությանը, կիրառելով բնապահպանական և սոցիալական մոնիտորինգի դաշտային ստուգաթերթեր՝ կանոնավոր կերպով համապատասխանության կարգավիճակը հետևելու և գրանցելու համար:

Առաջարկվող ծրագրի շինարարականներից ոչ մեկը տեղակայված չէ պահպանվող տարածքների, վայրի բնության միջավայրի կամ այլ զգայուն բնական տեղանքների հարևանությամբ: Հետևաբար OP 4.04 բնական բնակավայրերը չեն գործարկվում:

Բուժհաստատությունների համար ընտրված հողամասերը տեղակայված են քաղաքային պայմաններում: Ծինարարության ընթացքում որևէ անհայտ մշակութային արժեք գտնելու հավանականություն գրեթե չկա: Հետևաբար, OP 4.11 ֆիզիկական մշակութային ժառանգությունը չի գործարկվում: Գտնելու հնարավորության ընթացակարգերը ներառված են սույն ԲՄԿԿ-ում:

Ծրագիրը չի նախաձեռնում OP 4.12 հարկադիր վերաբնակեցում, քանի որ դրա իրականացման համար չի պահանջվի որևէ հողատարածք վերցնել կամ ֆիզիկական վերաբնակեցում առաջացնել: Նոր շենքերի կառուցման համար նախատեսված հողամասերը պետական սեփականություն են և ոչ մի տեսակի ոչ ֆորմալ օգտագործման տակ չեն: Ծրագրի նախապատրաստման ընթացքում հայտնի էին և ուսումնասիրվում էին կառուցման և վերակառուցման շինարարական աշխատանքների վայրերը: Հողերի ձեռքբերման կամ վերաբնակեցման հետևանքներ չեն ակնկալվում, ուստի հարկադիր վերաբնակեցման վերաբերյալ OP / BP 4.12-ը չի ձեռնարկվել: Ծրագրի շրջանակներում ցանկացած գործունեություն, որը կարող է վերաբնակեցման հետևանքներ առաջացնել, համարվում է ոչ իրավասու:

ՀՀ բնապահպանական օրենսդրությունը հիմնականում հիմնված է միջազգային կոնվենցիաների և ԵՄ հրահանգների վրա, ներառյալ ՀԲ բնապահպանական քաղաքականության դրույթները: ՀՀ օրենսդրության մեջ բժշկական կենտրոնների և հիվանդանոցների կառուցման ընթացքում ՇՄԱԳ-ի վերաբերյալ հատուկ պահանջներ չկան, սակայն, քանի որ դրանց կառուցման տարածքները սովորաբար գերազանցում են 1500 մ², պահանջվում է ՇՄԱԳ:

5.2 Ծրջակա միջավայրի վրա ազդեցությունները

Ծինարարության փուլ

Ընդհանուր առմամբ, ծրագրի շրջանակներում իրականացվող կառուցման և վերակառուցման շինարարական աշխատանքների հետ կապված շրջակա միջավայրի հնարավոր անբարենպաստ ազդեցություններն ենթադրվում են աննշան, կարճաժամկետ և տեղայնացված: Հավանական անբարենպաստ ազդեցությունների ճնշող մեծամասնությունը, ամենայն հավանականությամբ, տեղի կունենա շինարարության ընթացքում: Ակնկալվում է, որ շրջակա միջավայրի վրա երկարաժամկետ ազդեցությունները հիմնականում չեզոք կլինեն:

Ծրագրի իրականացման ընթացքում շրջակա միջավայրի հիմնական հնարավոր բացասական ազդեցությունները հետևյալն են.

Աղտոտում շինարարության արտահոսքերով: Մեքենաներից և կուտակված թափոններից վառելիքի / քսանյութի արտահոսքի արդյունքում նավթամթերքները և քիմիական նյութերը կարող են աղտոտել հողը, թափանցել ստորերկրյա ջրեր կամ դուրս գալ մակերևութային ջրեր: Տրանսպորտային միջոցների և մեքենաների սպասարկումը և վաճառումը բնական հոսանքներին հարող տարածքում կարող է հանգեցնել նաև ջրի աղտոտման՝ շինարարական արտահոսքերի արդյունքում: Եթե տեղում ստեղծվեն շինարարական ճամբարներ, այդ ճամբարներում տրամադրված սանիտարական կառույցներից կարող է առաջանալ շրջակա միջավայրի աղտոտում:

Ազդեցություններ կենսաբազմազանության վրա: Շինարարության ընթացքում հողային աշխատանքները կարող են հանգեցնել վեգետատիվ ծածկույթի վնասմանը: Ծինանյութերը, ավելցուկային նյութերի և թափոնների հեռացումը կարող են հանգեցնել նաև վայրի բնության, այդ թվում՝ կենսամիջավայրերի վրա ազդեցության: Այնուամենայնիվ, քանի որ բոլոր աշխատանքները ձեռնարկվելու են հիմնականում մշակվող տարածքում, դժվար թե զգալի վնասներ լինեն, ինչպես նաև ազդեցություններ բնական միջավայրի վրա:

Աղմուկ, թրթռում և օդի ժամանակավոր աղտոտում: Փոշին կստեղծվի հողային աշխատանքների, շինանյութերի/թափոնների փոխադրման և բեռնատարների երթևեկության պատճառով: Ծանապարհաշինական աշխատանքներից բխող փոշին և բիտումի ծուխը տեղայնացված և ժամանակավոր բացասական ազդեցություն կունենան օդի որակի վրա: Քանդման, շինարարության և տրանսպորտային գործունեության ընթացքում, մասնավորապես՝ հողային աշխատանքների, հորատման, ամբարձիչների շահագործման, սարքավորումների ապամոնտաժման կամ տեղադրման ժամանակ, աղմուկի մակարդակի զգալի աճ է սպասվում: Աղմուկն ու թրթռումը տեղական համայնքների համար անհանգստություն կստեղծեն բնակավայրերին անմիջական հարևանությամբ իրականացվող աշխատանքների ընթացքում:

Պեղված նյութերի և շինարարական թափոնների առաջացում: Շինարարության փուլում կստեղծվեն թափոնների հետևյալ տեսակները՝ քանդման մնացորդներ, հողի և ապարների ավելցուկ, հեռացված թփեր կամ ճյուղեր: և կենցաղային թափոններ, որոնք առաջացել են տեղում շինարարության աշխատողների առկայությունից և շինարարական ճամբարների շահագործումից: Հայաստանում հին շենքերի մեծ մասը ծածկված են ասբեստ պարունակող տանիքի նյութերով: Նման տանիքների փոխարինումը կարող է առողջության համար վտանգներ առաջացնել աշխատողների համար, և ոչ պատշաճ հեռացման դեպքում կարող է առաջացնել հասարակության առողջության համար ռիսկեր բնակչության ավելի լայն զանգվածի համար: Հին շենքերը կարող են ունենալ նաև ասբեստ պարունակող խողովակներ և կապար պարունակող ներկեր: Վտանգավոր թափոնների նման տեսակների մշակումը մարտահրավեր կլինի, հատկապես այն պատճառով, որ երկիրը չունի թափոնների հեռացման համար անհրաժեշտ ենթակառուցվածք:

Անվտանգության վտանգներ շինարարական գործունեությունից: Նախատեսված կառուցման/վերակառուցման շինարարական աշխատանքների ընթացքում առողջության և անվտանգության վրա անմիջական ազդեցությունը կարող է առաջանալ տարբեր գործոններից, ինչպիսիք են բարձունքներում աշխատելը, կռունկի/բուլդոզերի վրա աշխատանքը, եռակցման աշխատանքները և սանիտարական իրավիճակը շինարարության ընթացքում և այլն: Հնարավոր ազդեցություն աշխատողների առողջության և անվտանգության վրա հետագայում կարող է լինել շինարարական աշխատանքների ընթացքում պատահարների արդյունքում (կառույցի փլուզում) կամ աղտոտված խմելու ջրի/սննդի հետ կապված:

Երթևեկություն: Ակնկալվում է, որ երթևեկությունը բացասական ազդեցություն կունենա կառուցման/վերակառուցման շինարարական աշխատանքների ընթացքում: Բոլոր ջանքերը կգործադրվեն՝ շինարարական մեքենաներն ու բեռնատարները ճանապարհի երթևեկում գտնվելու ժամանակը նվազագույնի հասցնելու համար՝ վթարներից կամ նյութական ակտիվների վնասներից խուսափելու նպատակով: Ծինարարության կապալառուն աշխատողներին կհանձնարարի լինել մայրուղիում՝ անհրաժեշտության դեպքում

երթևեկությունը արգելափակելու և վարորդներին զգուշությամբ երթևեկելու զգուշացնելու նպատակով: Նրանք նաև կուղղորդեն երթևեկությունը, երբ ծանր տեխնիկան անցնի ճանապարհը: Արագության բարձրացումը և սպասվող երթևեկության ավելի մեծ ծավալները կարող են մեծացնել ճանապարհատրանսպորտային պատահարների թիվը: Ճանապարհային երթևեկության ճիշտ կառավարումը թույլ կտա հնարավորինս խուսափելու երթևեկի վրա բացասական ազդեցությունից:

Պատմամշակութային վայրեր: Նոր շինարարության դեպքում հնարավոր են պատահական գտածոներ:

Գործարկման փուլ

Հասարակական շենքերի շահագործման հետ կապված սովորաբար հանդիպող ռիսկերը ներառում են կենցաղային թափոնների վատ կազմակերպված հավաքում և վերացում, շենքերի շուրջ տարածքի ոչ պատշաճ սպասարկում, ջրահեռացման համակարգերի բացակայություն կամ անսարքություն: Թանիքների և ջրատարների արտահոսք՝ ստուգումներ չանցնելու և ժամանակին չվերանորոգելու պատճառով, ձյան անկանոն մաքրում մուտքի ճանապարհներից և շենքերի տանիքներից: Շահագործման փուլում հիվանդանոցների պացիենտների և անձնակազմի առողջության վրա այլ ազդեցությունները կարող են առաջանալ շենքերի բնական և արհեստական ոչ պատշաճ լուսավորությունից և օդափոխությունից, էլեկտրամատակարարման և ջեռուցման համակարգերի թերի շահագործումից, հատուկ բժշկական սարքավորումների շահագործման ընթացքում (հատկապես ռադիոակտիվ տեխնոլոգիաների օգտագործմամբ):

Առողջության հետ կապված ամենօրյա միջոցառումները՝ կանխարգելիչ և բուժիչ ծառայությունների տրամադրման արդյունքում, զգալի քանակությամբ թափոններ են առաջացնում: Արտադրված թափոնների բաղադրությունը կտրուկների (ասեղներ, ներարկիչներ), ոչ կտրուկների, արյան և այլ հեղուկների վարակված և և ոչ վարակված, քիմիական նյութերի, դեղագործական և բժշկական սարքերի տեսքով է: Նման թափոնների հեռացումը պահանջում է հատուկ մշակում և իրազեկում, քանի որ դրանք կարող են վարակիչ ռիսկ առաջացնել թափոնների հետ շփվող բուժաշխատողների համար: Ոչ ֆորմալ հեռացումը կարող է հանգեցնել հողի և ստորերկրյա ջրերի աղտոտմանը, բայց որ ավելի կարևոր է՝ վիրուսի հետագա տարածմանը հարակից համայնքներ:

COVID-19 բաղադրիչին արտակարգ իրավիճակների արձագանքման հետ կապված բժշկական սարքավորումների և պարագաների օգտագործումը հատուկ ռիսկեր է պարունակում շրջակա միջավայրի, համայնքների և ծրագրի աշխատողների համար: Նման ռիսկերը կարող են լինել վարակի ներքին տարածումը խուսափելու և հիվանդանոցի անձնակազմին փոխանցելուց խուսափելու նպատակով՝ հիվանդանոցների, լաբորատորիաների, հարակից այլ տարածքների ներսում անվտանգության միջոցառումների նախագծման և որակի անբավարարության պատճառով, կամ վտանգավոր և վարակիչ բժշկական թափոնների մշակման, տեղափոխման և վերացման հետ կապված կառավարման համակարգերի և օբյեկտների անբավարար լինելու պատճառով: Բուժաշխատողները, թափոնները մշակողները, առողջապահական հաստատությունների օգտագործողները և տեղական համայնքները, որոնք բժշկական թափոնների փոխադրման ուղիներ և հեռացման օբյեկտների շրջակայքում են՝ բոլորը ենթարկվում են վարակի վտանգի՝ բժշկական թափոնների վատ կառավարման արդյունքում:

5.3 Սոցիալական ազդեցություններ

Նախատեսվում է, որ նախագիծը չի կարող անբարենպաստ սոցիալական ազդեցություն ունենալ: Կառուցման միջոցառումները կսահմանափակվեն առկա բժշկական հաստատությունների տարածքներով և հողատարածքներով: Շինարարական աշխատանքները կարող են առաջացնել հարակից համայնքների ժամանակավոր խափանումներ, ինչպիսիք են աղմուկի մակարդակի բարձրացումը, փոշին կամ երթևեկի ժամանակավոր խափանումները: Դրանք չափվելու են ԲՄԿՊ-ներում ներառված մեղմացնող միջոցներով:

Կապալառուների կողմից ցանկացած պատահական վնաս, համաձայն ԲՄԿՊ- ի, ամբողջությամբ կվերականգնվի կամ կփոխհատուցվի կապալառուի կողմից:

Ծրագրի շրջանակներում հողի և վերաբնակեցման հետևանքները չեն ակնկալվում: Ծրագրերի ներդրման նպատակով օգտագործվող հողերը մանրակրկիթ ուսումնասիրվում են՝ վստահ լինելու համար, որ դրանք հանրային սեփականություն են, ազգային օրենսդրության համաձայն, օգտագործման համապատասխան իրավունքներով բժշկական հաստատության համար, որտեղ իրականացվում է ներդրումը: Ուսումնասիրությունը նաև կապահովի, որ տարածքների ոչ ֆորմալ օգտագործում չլինի, քանի որ ծրագրի ներդրումները չեն հանգեցնում վերաբնակեցման կամ այլ բացասական ազդեցություն չեն ունենալու բնակչության գույքի, ակտիվների կամ կենսամիջոցների վրա: Ենթածրագրերը, որոնք այդպիսի ազդեցություն են ունենում գույքի սեփականատերերի կամ ոչ պաշտոնական օգտագործման դեպքերում, կդիտարկվեն որպես ծրագրի ֆինանսավորման համար անթույլատրելի:

Հնարավոր սոցիալական ազդեցությունը կապված է ներառական և արդարացի կիրառման և մուտքի հետ ծրագրով նախատեսված օբյեկտներ բոլոր քաղաքացիների համար: սոցիալական ազդեցությունը վերաբերում է բոլոր քաղաքացիների համար ներառական և արդարացի օգտագործմանը և նախագծի աջակցման օբյեկտների մուտքին: Ծրագրի ներդրումները նախատեսվելու են ներառական եղանակով՝ ապահովելով հաշմանդամություն ունեցող անձանց համընդհանուր հասանելիությունը, և հնարավորության սահմաններում ենթածրագրերը տեղակայվելու են հասարակական տրանսպորտի մատչելի և լավ կապակցված տարածքներում: Ծրագիրն իրականացվելու է հավասարության և խտրականության պահպանման սկզբունքներին խստորեն հետևելով: Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող ծառայությունները և պարագաները մատչելի կլինեն և կտրամադրվեն բոլորին՝ անկախ նրանց սոցիալական կարգավիճակից, ելնելով անհրաժեշտության հրատապությունից:

Ծրագիրը կընդունի տարբերակված միջոցառումներ՝ ապահովելու խոցելի խմբերի ներառումը և հավասար մասնակցությունը, այսինքն՝ այն անձանց, ովքեր կարող են անհամաչափ ազդեցության ենթարկվել կամ ավելի խոցելի լինել ծրագրի (ծրագրերի) կողմից՝ համեմատած ցանկացած այլ խմբերի հետ՝ իրենց խոցելի կարգավիճակի պատճառով, կամ այն անձանց, որոնք հնարավոր է պահանջում են ներգրավման հատուկ ջանքեր՝ ապահովելու համար նրանց հավասար ներկայացվածությունը ծրագրի հետ կապված խորհրդատվության և որոշումների կայացման գործընթացում: Հայաստանի և ընթացիկ ծրագրի համատեքստում այդպիսի խմբերը կարող են ներառել աղքատ, գործազուրկ, սոցիալապես անապահով քաղաքացիներ, տարեցներ, հաշմանդամություն ունեցող անձինք կամ նրանց խնամակալներ, միայնակ ծնողներ, էթնիկ, կրոնական կամ լեզվական փոքրամասնությունների ներկայացուցիչներ, բնակիչներ կամ հեռավոր գյուղական բնակավայրեր և այլն: Ծրագիրը հնարավորության սահմաններում հարմարություններ կստեղծի, որպեսզի այդպիսի խմբերը կարողանան տեղեկատվություն ստանալ, մատչելի ծառայություններ, մասնակցեն հանրային քննարկումների, որպեսզի կարողանան իրենց կարծիքը հայտնել ծրագրի գործունեության վերաբերյալ, ինչպես նաև օգտվել բողոքների գրանցման մեխանիզմից:

Ծրագրի նախապատրաստման ընթացքում ծրագրում սեռական շահագործումը և չարաշահումը (ՄՇՉ) և սեռական ոտնձգությունները (ՄՈ) և դրանց ռիսկերը գնահատվել են ցածր: ԱԾԻԳ-ն իրականացրել է ՄՇՉ/ՄՈ ծառայության մատակարարների քարտեզագրում երկրում և ծրագրի համայնքներում: Ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ներքո ԱԾԻԳ-ը հետագայում կամրապնդի իր ջանքերը ՄՇՉ/ՄՈ-ի իրազեկության բարձրացման, կանխարգելման և մեղմացման ուղղությամբ: Ծինարարական աշխատանքների կապալառուներից պահանջվում է պատրաստել Վարքագծի կանոնագիրք, ներառյալ ՄՇՉ/ՄՈ արգելումը: Ծրագրի համար նախատեսված բողոքների գրանցման մեխանիզմը (ԲԳՄ) կներառի նաև ՄՇՉ/ՄՈ-ի վերաբերյալ բողոքների և դրանց լուծման հետ կապված խնդիրները, այդ թվում գաղտնի հաշվետվության մեխանիզմները ՄՇՉ/ՄՈ - ի խնդիրների անվտանգ և էթիկական փաստաթղթավորմամբ, և վերապրածների ուղղորդումը համապատասխան ծառայություններ մատուցող ընկերություններին: ԲԳՄ-ը նաև իրականացնելու է գործընթացներ՝ վերապրածի համաձայնությամբ, անհապաղ

ծանուցելու ինչպես ԱԾԻԳ-ին, այնպես էլ Համաշխարհային բանկին՝ ՄՇԶ/ՄՈ- ի վերաբերյալ ցանկացած բողոքների մասին:

5.4 Աշխատանք, աշխատանքային պայմաններ և աշխատանքի անվտանգություն և առողջություն

Ծրագրի շրջանակներում աշխատանքի կընդունվեն երկու տիպի աշխատողներ. Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակի հիմնական աշխատողներ, ինչպես նաև պայմանագրային աշխատողներ՝ խորհրդատուներ և շինարարական աշխատանքների կապալառուներ և նրանց աշխատակիցներ, ովքեր վարձվել են ԱԾԻԳ-ի կողմից ծրագրի հետ կապված: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների միջին մասշտաբը, պայմանագրային գծով աշխատողները, հավանաբար, կլինեն տեղական կամ Հայաստանի այլ շրջաններից: Նախատեսված չէ, որ ծրագրի շրջանակներում կստեղծվեն աշխատանքային ճամբարներ: Աշխատուժ ներհոսքի հետ կապված ռիսկերը ցածր են: Աշխատանքի առողջության և անվտանգության ռիսկերը բնորոշ են փոքր և միջին կառուցման և վերակապառուցման աշխատանքներին: Դրանք մեղմվելու են ազգային օրենսդրությանը և լավ պրակտիկային հավատարիմ մնալով, ինչպիսիք են համապատասխան անհատական պաշտպանիչ միջոցների կրելը, աշխատանքային ժամերի քանակը սահմանափակելը և հատկապես մուշն ընկնելուց հետո ժամերը (եթե այդպիսիք կան), աշխատողներին անվտանգության դասընթացների համապատասխան ուսուցում տրամադրելը տեղում, նախքան աշխատանքների մեկնարկը:

ՀՀ աշխատանքային օրենսգիրքը կարգավորում է աշխատանքային հարաբերությունները՝ ներառյալ գործատուների և աշխատողների իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունները: Օրենսգիրքն անդրադառնում է կոլեկտիվ և անհատական աշխատանքային հարաբերությունների տարբեր սապեկտների: Օրենսգիրքն ընդգրկում է հետևյալ կարևոր խնդիրները. աշխատանքային պայմանագրեր, աշխատանքային ժամեր, վճարովի արձակուրդներ, ծննդաբերության պաշտպանություն և հետծննդյան արձակուրդ, երիտասարդ աշխատողների նվազագույն տարիքը և պաշտպանություն, հավասարություն, արհմիությունների կարգավորում, կոլեկտիվ պայմանագրեր, աշխատանքային վեճերի լուծում և այլն: Աշխատանքային օրենսգրքի 23-րդ հոդվածը նվիրված է աշխատանքային անվտանգությանն ու առողջությանը, ինչպես նաև աշխատանքային պայմաններին: Աշխատանքային օրենսգրքի 3.1-րդ հոդվածն արգելում է ցանկացած տեսակի խտրականություն, որը կատարվում է անձնական բնութագրի հիման վրա և որը չի առնչվում աշխատանքի պահանջներին: ՀՀ աշխատանքային օրենսգիրքը չի սահմանում աշխատողների կողմից աշխատավայրում առկա մտահոգությունները բարձրաձայնելու համար բողոքարկման մեխանիզմի ստեղծման անհրաժեշտությունը: Կապալառուներից նաև պահանջվում է իրենց աշխատողների համար տրամադրել բողոքարկման և փոխհատուցման մեխանիզմի ընդունելի միջոց: Ծինարարական աշխատանքների կապալառուներից պահանջվում է պատրաստել Վարքային կանոնագիրք, ներառյալ երեխաների և հղիության բռնի արհեստական ընդհատումը արգելումը, ապօրինի թմրանյութերի օգտագործումը, սեռական շահագործման և չարաշահման և սեռական ոտնձգությունների արգելքը:

6. ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՄԵՂՄԱՑՈՒՄԸ

Ստորև բերված է ծրագրի շինարարության և շահագործման փուլերի համար առաջարկվող մեղմացման միջոցառումների ընդհանուր փաթեթ: Ակնկալվում է, որ համապատասխան ներդրումների համար մշակված ԲՄԱԳ / ԲՄԿՊ մեղմացնող միջոցառումների այս ընտրացանկը համապատասխանեցնելու են անհատական ներդրումների կարիքներին:

6.1 Ծինարարության փուլ. Կարճաժամկետ ազդեցություններ

Արտանետումները, աղմուկը և թրթռումը առաջանում են շինարարական աշխատանքների ընթացքում, երբ հիմք է փորվում, նյութեր են բեռնվում /բեռնաթափվում/, տեղափոխվում, գործում են շինարարական սարքավորումներ

և տրանսպորտային միջոցներ և այլն: Այս բացասական ազդեցությունները նվազագույնի հասցնելու համար անհրաժեշտ է.

- պահպանել շինարարության սարքավորումները և տեխնիկական համարժեք տեխնիկական վիճակում
- խուսափել շարժիչների անգործությունից
- չօգտագործել ոչ ստանդարտ վառելիք:

Ծինհրապարակներում ջրի ավելորդ և չօգտագործված լինելը կարող է հանգեցնել տեղանքի ջրհեղեղի, տեղամասի արտահոսքի, ստորգետնյա ջրերի յուղերով և քսանյութերով աղտոտման: Այս բացասական ազդեցությունները նվազագույնի հասցնելու համար անհրաժեշտ է.

- թույլ չտալ արտահոսք շինհրապարակներից
- շինհրապարակում ցանկացած տրանսպորտային միջոցի լվացումը պետք է լինի նշանակված վայրում՝ յուղը գետնին չթափանցելու մեխանիզմով:

Հողի աշխատանքները, հատկապես հիմքերի պեղումները, կարող են հանգեցնել շինհրապարակներում պատահական գտածոների կամ վտանգավոր իրերի և նյութերի հայտնաբերմանը, որոնք մնացել են նախորդ հողօգտագործումից: Գտնելու դեպքում անհրաժեշտ է.

- անհապաղ դադարեցնել պեղումները բոլոր և հաղորդել Պատմության և մշակույթի հուշարձանների պաշտպանության պետական գործակալությանը և տեղական իշխանություններին
- չվերսկսել աշխատանքները մինչև վերը նշված մարմիններից գրավոր թույլտվություն ստանալը:

Հողի տակ գտնվող անհայտ օբյեկտներ և (կամ) նյութեր հանդիպելու դեպքում անհրաժեշտ է.

- անհապաղ դադարեցնել շինարարական բոլոր գործողությունները և հաղորդել արտակարգ իրավիճակների կարգավորման համար պատասխանատու ազգային մարմիններին
- չվերսկսել աշխատանքները մինչև վերը նշված մարմիններից պաշտոնական թույլտվություն ստանալը:

Հին շենքերում շինարարական աշխատանքները կարող են պահանջել ասբեստ պարունակող նյութերի հեռացում: Աշխատողների առողջության համար վտանգներից և վտանգավոր թափոններով շրջակա միջավայրի աղտոտումից խուսափելու համար անհրաժեշտ է.

- ապահովել վտանգավոր նյութերի ազդեցությանն ենթարկված բոլոր աշխատողների և անձնակազմի կողմից անձնական պաշտպանիչ հանդերձանքի պատշաճ օգտագործումը
- ապամոնտաժելիս խուսափել շենքերի ասբեստ պարունակող մասերի անհարկի մասնատումից և դրանք նախապես ցողել
- պահել ասբեստ պարունակող շինարարական թափոնները աշխատանքային տեղանքի առանձին և հատկապես մեկուսացված վայրում և ժամանակին դրանք տեղափոխել ծածկված տրանսպորտային միջոցների օգտագործմամբ՝ պաշտոնապես նշանակված աղբահանության վայր:

Ոչ թունավոր շինարարական թափոնները, ներառյալ պեղված ավելցուկային նյութերը, սխալ կառավարման դեպքում կարող են խոչընդոտել աշխատանքներին և աղտոտել շրջակա միջավայրը: Առաջացած շինարարական թափոններից բացասական ազդեցությունները նվազագույնի հասցնելու համար անհրաժեշտ է.

- կազմակերպել թափոնների ժամանակավոր պահուստավորում հատուկ նշանակված վայրերում և ժամանակին հեռացնել դրանք դեպի մշտական հեռացման վայր
- թափոնների տեղափոխման համար օգտագործել ծածկված տրանսպորտային միջոցներ
- թափոնների մշտական հեռացման համար ժամանակին գրավոր թույլտվություն ստանալ քաղաքային իշխանություններից և ապահովել, որպեսզի բոլոր թափոնները վերացվեն բացառապես այդպիսի պաշտոնապես նշանակված վայրերում:

Ծինարարության ընթացքում կարող են լինել դժբախտ պատահարներ, որոնք հանգեցնում են առողջության վնասի և նույնիսկ զոհերի: Առողջության վրա բացասական ազդեցության և վթարների ռիսկը նվազագույնի հասցնելու համար շինարարները պետք է.

- ապահովեն, որ աշխատողներին և ցանկացած այցելուներին տրամադրվեն և օգտագործեն անձնական պաշտպանիչ հանդերձանք
- ապահովեն, որպեսզի աշխատողներն անցնեն աշխատանքային անվտանգության դասընթացներ

- ապահովեն, որ մեծ սարքավորումների վրա աշխատող անձնակազմը պատշաճ կերպով պատրաստված և լիցենզավորված լինի
- ապահովեն, որպեսզի շինարարական սարքավորումները ստուգվեն և լիցենզավորվեն
- ապահովեն, որ շինարարական սարքավորումներն օգտագործվեն՝ խստորեն հետևելով դրա շահագործման հրահանգներին
- տեղում պահել առաջին բուժօգնության պայուսակները և հրդեհաշիջման սարքավորումները:

Շինարարական աշխատանքները, հատկապես մեքենաների շահագործումը, կարող են անհանգստություն առաջացնել հարակից բնակիչների համար՝ աղմուկի, փոշու և թրթռանքի պատճառով: Այս բացասական ազդեցությունները նվազագույնի հասցնելու համար անհրաժեշտ է.

- պահպանել շինարարության սարքավորումները և տեխնիկան համարժեք տեխնիկական վիճակում, խուսափել շարժիչների անգործությունից
- ջրել շինհրապարակները փոշոտ աշխատանքների ընթացքում կամ, հատկապես, տաք և չոր եղանակային պայմաններում
- չթույլատրել գործողություններ աշխատանքային ժամից դուրս:

6.2 Գործողության փուլ. Երկարաժամկետ ազդեցություններ

Տաք ջրամատակարարման և ջեռուցման համակարգերի շահագործման, ինչպես նաև արտակարգ իրավիճակների պահուստային համակարգերի գործարկման արգասիքներն արտանետվում են շրջակա միջավայրի օդ: Արտանետման բացասական ազդեցությունները նվազագույնի հասցնելու նպատակով անհրաժեշտ է.

- տեղադրել և գործարկել բարձրորակ և էներգաարդյունավետ սառեցման/ջեռուցման համակարգեր
- ապահովել շենքերի պատշաճ մեկուսացում՝ էներգիայի սպառումը նվազեցնելու համար
- Կաթսաները և այլ սարքավորումներ պահել պատշաճ աշխատանքային վիճակում՝ վառելիքի ավելորդ օգտագործման և արտանետումներից խուսափելու նպատակով:

Կլիմայի շահագործումը կստեղծի թափոնների բազմազանություն, ներառյալ բժշկական, կենցաղային, հեղուկ և վտանգավոր թափոնները: Թափոնների կառավարման համակարգը պետք է ներառի.

- առանձնացված թափոններ (բժշկական, կենցաղային, հեղուկ)
- տարանջատված թափոնների համար համապատասխան տարաներով ապահովումը, ինչպես նաև անվտանգ պահեստավորման օբյեկտների ապահովումը և թափոններ փոխադրող տրանսպորտային միջոցների հարմարավետ մուտքը վերոնշված օբյեկտներ
- բժշկական և վտանգավոր թափոնների հեռացման, դեակտիվացման համար լիցենզավորված մասնագիտացված ընկերությունների հետ պայմանագրերի կնքում
- կլիմայի համապատասխան համակարգերի միացումը կեղտաջրերի հավաքման քաղաքային համակարգերին և համապատասխան պահպանման կազմակերպում՝ ներքին կոյուղու անոթերի աշխատանքը ապահովելու համար:

Հատուկ միջոցառումներ կապված COVID-19-ին արագ արձագանքման:

Համաձայն Համաշխարհային բանկի ուղեցույցների, որտեղ ֆինանսավորման շրջանակը ներառում է բժշկական պարագաներ և սարքավորումներ, Համաշխարհային բանկի աշխատանքային թիմը՝ բնապահպանական և սոցիալական հարցերով աշխատակազմի գլխավորությամբ, ստուգում է վարկառուի համակարգերը, ապահովելու համար, որ պարագաներն ու սարքավորումները տրամադրվել են համաձայն առողջության և անվտանգության վերաբերյալ ազգային օրենքների (կամ ընդունված ստանդարտների), թափոնների կառավարման և բողոքների գրանցմանման մեխանիզմի: Դրանով ԱՇԻԳ-ը պետք է ստուգի և ներկայացնի, որ ամկա են հետևյալ միջոցառումները. թափոնների կառավարման համարժեք համակարգեր, գործող բողոքների գրանցմանման մեխանիզմ, ներառյալ շահառու հաստատությունում կամ լաբորատորիայում, և որ այդ շահառուների կամ

լաբորատորիաների անձնակազմը ստացել է համապատասխան դասընթացներ մատակարարումների և սարքավորումների կիրառման վերաբերյալ:

ՀՀ ԱՆ-ի բժշկական հաստատություններն օգտվում են մասնավոր հատվածի ծառայություններից, որոնք բժշկական թափոնները հավաքման և տեղափոխում են դեպի թափոնների արտոնագրված այրիչներ՝ ինսեներատորներ: Պարտադիր է, որ ծրագրի աջակցությունը ստացող բոլոր բժշկական հաստատություններն օգտվեն հանրապետությունում գոյություն ունեցող բժշկական թափոնների հեռացման արտոնագրված ծառայություններից: Այս արտոնագրված կապալառուները պատասխանատու են նաև բժշկական թափոնների տեղափոխման համար:

Վարակի վերահսկման և թափոնների կառավարման պլանի նախապատրաստումը (Հավելված 6) կարևոր կլինի, COVID-19-ի ռիսկի նվազեցման համար: Վերջինս ընթանում է Առողջապահության աշխատակազմի և այլ շահագրգիռ կողմերի կարողությունների կիրառմանը զուգահեռ: Բժշկական հաստատությունը կստանա ծրագրի աջակցություն, եթե որևէ բացեր չեն հայտնաբերվել:

Այն դեպքում, երբ դիտարկման կամ մոնիտորինգի արդյունքում հայտնաբերվում են բացեր, կլիրականացվեն համաձայնեցված շտկողական գործողություններ: Միջոցառումները կարող են ներառել հիվանդանոցային պրակտիկայի և վերահսկողության հզորացում բժշկական թափոնների տեղակայման և հեռացման հարցում, այլընտրանքային վայրերի հայտնաբերման և փոխադրման միջոցառումների նույնականացում՝ ապահովելու համար թափոնների հեռացումը համարժեք տարածքներ: Միայն այն դեպքում, երբ ԱԾԻԳ-ի կողմից հաստատվում են համապատասխան միջոցներ, կարող են սկսվել կամ վերսկսվել ծրագրի գործողությունները:

Բժշկական թափոնների կառավարում և հեռացում: Ծրագիրը կմեղմացնի այս ռիսկերը՝ հավատարիմ մնալով, ԱՀԿ, ինչպես նաև Համաշխարհային բանկի խմբի շրջակա միջավայրի առողջության և անվտանգության ուղեցույցներին, և այլ լավ միջազգային պրակտիկաներին: ԱԾԻԳ-ը և բժշկական հաստատությունը կապահովեն հետևյալը.

- Յուրաքանչյուր բժշկական հաստատություն գործում է համաձայն Վարակի վերահսկման և թափոնների կառավարման պլանի
- Թափոնների տարանջատումը, փայթեթավորումը, հավաքումը, պահեստավորումը և փոխադրումն իրականացվում են համաձայն Վարակի վերահսկման և թափոնների կառավարման պլանի և ԱՀԿ-ի կողմից մշակված COVID-19-ի ուղեցույցների
- Թափոնների կառավարումը և հեռացումը պարբերաբար կվերանայվեն և ոսուցումներ կիրականացվեն շաբաթական կտրվածքով Վարակի վերահսկման և թափոնների կառավարման պլանի վերաբերյալ
- ԱԾԻԳ-ն ամսական ստուգումներ կիրականացնի աղբահանության պահանջվող տեղակայման համապատասխանությունը ապահովելու նպատակով, կձեռնարկի անհրաժեշտ շտկող միջոցներ
- Թափոնների առաջացումը, նվազագույնիացումը, վերօգտագործումը և վերամշակումը գործնական են եղել COVID-19-ի ենթատեսքում:

Բուժաշխատողների պաշտպանվածություն: ԱԾԻԳ-ը և բժշկական հաստատությունը կապահովեն հետևյալը.

- Ապրանքների կանոնավոր առաքում և պատշաճ պահպանում, ներառյալ նմուշներ, դեղամիջոցներ, ախտահանող միջոցներ, ռեակտիվներ, այլ վտանգավոր նյութեր, անձնական պաշտպանիչ միջոցներ և այլն
- Կանոնավոր արձանագրություններ հասարակական սենքերի, հիվանդասենյակների, ինտենսիվ թերապիայի բաժանմունքների, սարքավորումների, գործիքների և թափոնների ախտահանման վերաբերյալ
- Լվացարանների և այլ սանիտարական կետերի մշակված մատակարարումը մաքուր ջրով, օճառով և ախտահանմամբ
- ավտոկլավների աշխատանքային վիճակը
- Covid-19-ի հետ կապ ունեցող առողջապահության ոլորտի աշխատողներին կանոնավոր ստուգումների տրամադրումը:

Covid-19-ի վերահսկում: ԱՃԻԳ-ն և բժշկական հաստատությունը կապահովեն հետևյալը.

- COVID-19-ով հիվանդների համար պահպանվում են կարանտինային ընթացակարգերը
- COVID-19-ով հիվանդներին հնարավորություն է տրվում հեռախոսի կամ կապի այլ միջոցի՝ ընտանիքի/ընկերների հետ շփվելու՝ կարանտինում մեկուսացման ազդեցությունը թուլացնելու նպատակով
- Հանրությունը պարբերաբար տեղեկացվում է իրավիճակի մասին և հիշեցվում են կանոնները, որոնց պահպանումը կանխում է COVID-19-ի տարածումը
- Հասարակության այն անդամները (ընտանիք և ընկերներ), ովքեր շփվել են հաստատված COVID-19-ով հիվանդների հետ, թեստավորվում են:

Մեռական շահագործում և չարաշահում/սեռական ոտնձգություն (ՄՇՉ/ՄՈ): ԱՃԻԳ-ը ձեռնարկելու է հետևյալ միջոցառումները ՄՇՉ/ՄՈ ազդեցության կանխարգելման և մեղմացման համար.

- Նշանակել ՄՇՉ/ՄՈ համար պատասխանատու անձ
- Ապահովել, որպեսզի ԱՃԻԳ-ի և շինարարական աշխատանքներն իրականացնող կապալառուի բոլոր աշխատակիցները ծանոթանան և ստորագրեն Վարքագծի կանոնները
- Պատրաստել և անցկացնել իրազեկման դասընթացներ բոլոր աշխատակիցների համար ՄՇՉ/ՄՈ կանխարգելման և մեղմացման վերաբերյալ
- Նախատեսել ծրագրի բողոքարկման մեխանիզմը ՄՇՉ/ՄՈ-ի հետ կապված բողոքների ստացման և դրանց մշակման համար
- Վերապատրաստել բուժաշխատողներին, որոնք COVID-19-ի բռնկման արձագանքի մաս են կազմում՝ կարեկցող և ոչ դատող եղանակով արձագանքելու ՄՇՉ/ՄՈ-ի հետ կապված բողոքներին՝ տեղեկացնելով, թե ում կարող են դիմել տուժածները հետագա բուժման համար կամ բուժկենտրոններ դիմելու մասին՝ տեղում խնամք կազմակերպելու հնարավորությամբ
- Իրականացնել ՄՇՉ/ՄՈ-ի ծառայության քարտեզագրում ազգային մակարդակով և ծրագրի հատուկ տարածքներում
- Ստեղծել ՄՇՉ/ՄՈ-ի ուղղորդման ճանապարհ՝ հանրապետության առողջապահական կառույցներին համահունչ, որի նպատակն է, որ հոգեբանական սոցիալական աջակցությունը լինի մատչելի կանանց և աղջիկների համար, ովքեր կարող են տուժել COVID-19-ի բռնկումից, և որոնք նաև ՄՇՉ/ՄՈ-ով վերապրածներն են:

7. ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՒ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

7.1 Շահագրգիռ կողմերի ներգրավվածություն և խորհրդատվություն

Ըստ ՀՀ օրենքի, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին, ծրագրի փաստաթղթերը և առաջարկվող շինարարական աշխատանքների համար ՇՄԱԳ հաշվետվությունները ներկայացվում են ՀՀ բնապահպանության նախարարություն: Նախագծող ընկերությունը, Բնապահպանության նախարարության և համապատասխան քաղաքապետարանների հետ համատեղ կկազմակերպի հանրային քննարկումներ, նախապես տեղեկացնելով շահագրգիռ կողմերին լրատվամիջոցներով: ՇՄԱԳ հաշվետվությունները պետք է մատչելի լինեն բոլոր շահագրգիռ կողմերի համար, հետևաբար, կտեղադրվեն Բնապահպանության նախարարության, Առողջապահության նախարարության կայքերում և տպագիր օրինակները կտրամադրվեն բոլոր շահագրգիռ կողմերին՝ ըստ պահանջի:

Այն արագությունն ու հրատապությունը, որով լրացուցիչ ֆինանսավորման աշխատանքները նախապատրաստվում են՝ COVID-19-ին արձագանքելու և բարձրորակ հիվանդանոցային ծառայություն ապահովելու համար, կարող է ռիսկեր առաջացնել շահագրգիռ անձանց ներգրավման առումով: COVID-19-ի

համաճարակի ընթացքում քննարկումներ կազմակերպելիս ԱԾԻԳ-ը կհետևի կանխարգելիչ միջոցառումներին՝ ազգային և միջազգային ուղեցույցներին համապատասխան, ինչպիսիք են նվազագույնի հասցնել դեմ առ դեմ հանդիպումները, խուսափել ավելի քան տասը անձանց հավաքություններից, ինչպես նաև թվային/հեռախոսային հաղորդակցություններ օգտագործել որքան հնարավոր է: Հաղորդակցությունը շահառու հիվանդանոցների, տեղական իշխանությունների և այլ շահագրգիռ կողմերի հետ կանոնավոր կերպով կպահպանվի հեռախոսի, էլ. փոստի միջոցով և այն դեպքում, երբ հնարավոր է՝ անձամբ ԱԾԻԳ հետ: ԱԾԻԳ-ը հիմնական շահագրգիռ կողմերին տեղեկացնելու է կայքում ծրագրի վերաբերյալ տեղեկատվության տեղակայումը, ինչպես նաև բացատրելու է ծրագրի բնապահպանական և սոցիալական պահանջների բովանդակությունը և ղեկավարելու է սկրինինգի ու մոնիտորինգի գործընթացը: Քննարկումների վայրերը լիովին հասանելի կլինեն, կանցկացվեն հասարակության համար հարմարավետ կենտրոնական և հեշտ հասանելի հասարակական տրանսպորտի միջոցով վայրերում՝ հաշվի առնելով մարդկանց միջև սահմանված հեռավորության պահանջները:

Բնօրինակ ԲԿԿ-ը հրապարակվել է բնօրինակ ծրագրի պատրաստման պահին: Ծահագրգիռ կողմերի հանրային քննարկումների համառոտ նկարագիրը կցվում է: Յուրաքանչյուր ներդրման համար հատուկ ԲՄԿՊ-ներ մշակվում է ԱԾԻԳ-ի կողմից, հաստատվել է Համաշխարհային բանկի կողմից, հրապարակվել, քննարկվել է շահագրգիռ կողմերի հետ և կրկին հրապարակվել է՝ հանրային քննարկումների համառոտ նկարագիրը կցված:

ԲՄԿԿ-ի ներկայիս նորացված տարբերակը հրապարակվել է ԱԾԻԳ կայքում, 2020-ի ապրիլի 24-ին և բացվել է շահագրգիռ կողմերի հետադարձ կապի համար: Ապագա քննարկումների կազմակերպման հարցում ԱԾԻԳ-ը կհետևի կանխարգելիչ միջոցառումներին՝ ազգային և միջազգային ուղեցույցներին համապատասխան, ինչպիսիք են դեմ առ դեմ հանդիպումները նվազագույնի հասցնելը, ավելի քան տասը անձի հավաքություններից խուսափելը և որքանով հնարավոր է թվային և հեռախոսային հաղորդակցություններ օգտագործելը: Հաղորդակցությունը շահառու հիվանդանոցների, տեղական իշխանությունների և այլ շահագրգիռ կողմերի հետ, կանոնավոր կերպով կպահպանվի հեռախոսի, էլ. փոստի միջոցով և այն դեպքում, երբ հնարավոր է՝ անձամբ ԱԾԻԳ հետ: ԱԾԻԳ-ը հիմնական շահագրգիռ կողմերին տեղեկացնելու է կայքում ծրագրի վերաբերյալ տեղեկատվության տեղակայումը, ինչպես նաև բացատրելու է ծրագրի բնապահպանական և սոցիալական պահանջների բովանդակությունը և ղեկավարելու է սկրինինգի ու մոնիտորինգի գործընթացը:

Մարտունու ԲԿ-ի կառուցման վերաբերյալ հանրային քննարկումներն անցկացվել են 2019 թվականի հուլիսի 18-ին, տեղական ՀԿ-ների, համայնքի անդամների, լրատվամիջոցների, ճարտարապետ-դիզայների, տեղական ինքնակառավարման, քաղաքապետարանի, տեղական ՉԼՄ-ների և ԱԾԻԳ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ: Հանդիպումը հայտարարվել էր համայնքի կայքում և լրատվամիջոցներում: Դրա արդյունքները լուսաբանել են Գեղարքունիքի մարզի տեղական հեռուստատեսությունը, «Արմենպրես»-ը և տեղական «Գեղամա աշխարհ» թերթը: Քննարկումներին մասնակցում էին տեղական ՀԿ-ների ներկայացուցիչներ և սոցիալական ծառայություններ տրամադրողներ, որոնք աշխատում են խոցելի խմբերի հետ: Քննարկումների նկարագիրն ամփոփվում է հրապարակված ԲՄԿՊ-ում: Նմանատիպ ընթացակարգ կլինի Վայոց ձորի հիվանդանոցի շինարարության և ԲՄԿՊ - ի վերաբերյալ քննարկումների համար:

ԱԾԻԳ-ը կներդնի բոլոր ողջամիտ ջանքերը՝ ներառական քննարկումների գործընթաց ապահովելու համար, ներառյալ այն անձանց համար, ովքեր ավելի մեծ խոչընդոտներ են ունենում մասնակցության համար (ինչպիսիք են տարեցները, հաշմանդամություն ունեցող անձինք): Այդ նպատակով քննարկումների վայրերը լիովին հասանելի կլինեն, քննարկումները կանցկացվեն հանրության հարմար ժամին և կենտրոնական, հեշտ հասանելի հասարակական տրանսպորտի միջոցով վայրերում: Ծրագրի և քննարկումների վերաբերյալ տեղեկատվությունը լայնորեն կլուսաբանվի բոլոր այն համայնքներում, որտեղ պետք է ներդրումներ լինեն, քննարկումներից առնվազն տաս օր առաջ: Ըստ անհրաժեշտության կարող են քննարկումներ կազմակերպվել, շահագրգիռ հատուկ խմբերի հետ, օրինակ՝ հիվանդների, խնամակալների կամ բժշկական անձնակազմի:

7.2 Բողոքների գրանցման մեխանիզմ

ԱԾԻԳ-ը կստեղծի բողոքների գրանցման մեխանիզմը (ԲԳՄ), որը պետք է կարգավորի ծրագրի հետ կապված բոլոր տեսակի բողոքները և հետադարձ կապը, ներառյալ այն, ինչ վերաբերում է բուժաշխատողներին և տեղական համայնքներին՝ կապված COVID-19 համաճարակի հետ: ԲԳՄ-ը կառավարվելու է ԱԾԻԳ բնապահպանական և սոցիալական պաշտպանության մասնագետի կողմից: Հիվանդանոցների կամ բժշկական հաստատությունների (որտեղ իրականացվելու է ծրագիրը) կողմից նշանակված անձնակազմը, բողոքները կդիտարկի հաստատության մակարդակում, որպես ԲԳՄ-ի առաջին մակարդակ: Համապատասխան հարցեր կամ բողոքներ կուղղվեն ԱԾԻԳ-ի անձնակազմին, ըստ իրենց իրավասության: Բնապահպանության և սոցիալական մասնագետը կապահովի լայն տեղեկացվածություն համայնքների և ծրագրի բոլոր շահագրգիռ կողմերի ԲԳՄ-ի մանրամասների վերաբերյալ: Բնապահպանության և սոցիալական մասնագետը կկարգավորի ԲԳՄ-ի մատյանի վարումը և դրա մասին հաշվետվություն կներկայացնի Համաշխարհային բանկի յուրաքանչյուր առաջընթացի զեկույցում:

Բողոքների գրանցման մեխանիզմի հիմնական նպատակն է՝ օժանդակել բողոքների լուծմանը ժամանակին և արդյունավետ, որը կբավարարի ներգրավված բոլոր կողմերին: Մասնավորապես, ԲԳՄ.

- Ծրագրից տուժած կողմին միջոցներ է տրամադրում բողոք ներկայացնելու կամ որևէ վեճ լուծելու համար, որը կարող է ծագել ծրագրի իրականացման ընթացքում
- Ապահովում է, որպեսզի համապատասխան և փոխադարձաբար ընդունելի գործողությունները գտնվեն և իրականացվեն բողոքողների բավարարման հնարավորություններով
- Աջակցում է մատչելիությանը, անանունությանը, գաղտնիությանը և թափանցիկությանը՝ բողոքների վարման հարցում
- Խուսափում է դատական գործընթացներին դիմելու անհրաժեշտությունից (գոնե սկզբում):

ԲԳՄ -ն ներառելու է հետևյալ քայլերը.

- **Քայլ 1.** Բողոքների ներկայացում բանավոր, գրավոր առաջարկի / բողոքարկման տուփի միջոցով, հեռախոսային թեժ գծի միջոցով / բջջային, փոստ, փոստային հաղորդագրություն, SMS, սոցիալական մեդիա (WhatsApp, Viber, FB և այլն) կամ ցանկացած 3 մակարդակով՝ 1. տեղական ծառայություններ մատուցող (հիվանդանոցներ կամ բժշկական հաստատության նշանակված անձնակազմ); 2. տեղական իշխանություններ (քաղաքային գրասենյակներ); 3. ազգային, ծրագրի մակարդակ՝ Առողջապահության ծրագրերի իրականացման գրասենյակ: ԲԳՄ - ն թույլ կտա նաև անանուն բողոքներ բարձրացնել և ուղղել:
- **Քայլ 2.** Բողոքների գրանցում, բողոքների դասակարգում ըստ տիպի՝ հնարավորինս արդյունավետ և արագ պատասխան տալու համար մակարդակ 1-ում (նշանակված անձնակազմ): Բողոքի տիպը որոշվում է ըստ բողոքողի բնութագրի (օրինակ, խոցելի խմբեր, հաշմանդամություն ունեցող անձ, լեզվական խոչընդոտներ և այլն), ինչպես նաև բողոքի բնույթի:
- **Քայլ 3.** 15 օրվա ընթացքում բողոքների ուսումնասիրություն, պատասխանի հաղորդում:
- **Քայլ 4.** Բողոքողի պատասխանը. հետագա քայլերի ձեռնարկում, եթե բողոքները մնում են բաց, մասնավորապես, բողոքողին հնարավորություն է տրվում դիմել ԱԾԻԳ:

Համաձայն ՀՀ օրենքների, ծրագրից տուժած անձինք ցանկացած փուլում կարող են դիմել դատարան:

ԲԳՄ-ի մատյանը (էլեկտրոնային կամ տպագիր) կպահպանվի ԱԾԻԳ մասնագետի կողմից: ԲԳՄ կարգավիճակի հաշվետվությունները կներառվեն Համաշխարհային բանկին պարբերաբար ներկայացվող առաջընթացի հաշվետվություններում՝ բողոքների, իրենց տեսակների, ձեռնարկված միջոցառումներին առաջընթացի ամփոփ տեսքով:

Սեռական շահագործման և չարաշահման և սեռական ոտնձգությունների (ՍՇԶ/ՍՈ) խնդիրների լուծում.
Ծրագրի ընթացքում ՍՇԶ/ՍՈ-ն ռիսկերը ուսումնասիրվել և գնահատվել են ցածր: ԱԾԻԳ-ն իրականացրել է ՍՇԶ/ՍՈ ծառայություններ մատուցող ընկերությունների սկրինինգ ազգային մակարդակում և որպես ծրագրին առնչվող: ԱԾԻԳ-ը կատարաստի և կընդունի պրոտոկոլներ ՍՇԶ/ՍՈ խնդիրները կարգավորելու, գենդերային բռնության հետ կապված անվտանգության և էթիկայի շրջանակներում փաստաթղթերի գաղտնի հաշվետվությունների մեխանիզմը ներդնելու համար: Բացի այդ, ԲԳՄ-ը կունենա նաև գործընթացներ անմիջապես տեղում տեղեկացնելու ինչպես ԱԾԻԳ-ին, այնպես էլ Համաշխարհային բանկին՝ գենդերային բռնության հետ կապված ցանկացած բողոքների վերաբերյալ՝ վերապրածի համաձայնությամբ: Պրոտոկոլը կուղեկցվի դրանց կիրառման դասընթացներով՝ վերոնշյալ խնդիրներով զբաղվող բոլոր նշանակված անձանց համար: ԱԾԻԳ-ը կօգտվի գենդերային բռնության հետ կապված (ՍՇԶ/ՍՈ) հարցերով զբաղվող փորձագետի ծառայություններից սույն պրոտոկոլի պատրաստման և ԲԳՄ-ը կիրառելու նպատակով նշանակված անձանց իրազեկության բարձրացման, ինչպես նաև ուսումնական նյութերի պատրաստման գործում:

8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԳԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀՏՈՒՄ և ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (ՇՄԱԳ)

ԱՆ պարտականությունները

ԱՆ-ը, որպես «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ծրագիրն ԱԾԻԳ-ի միջոցով իրականացնող անձ, պատասխանատու կլինի այս ներդրումների ՇՄԱԳ-ի իրականացման, ազգային շահագրգիռ կողմերին և ՀԲ-ին ՇՄԱԳ-ի զեկույցների նախնական տարբերակի փախանցման, հանրային քննարկումներ կազմակերպելու, ՇՄԱԳ-ի վերջնական տարբերակի մշակման և կրկին հրապարակելու համար՝ ազգային լրատվամիջոցների և ՀԲ-ի էլեկտրոնային բազայի միջոցով: ՇՄԱԳ-ները, ներառյալ ԲՄԿՊ- ները կմշակվեն և կհրապարակվեն հայերեն ու անգլերեն լեզվով, և հասանելի կլինեն շահագրգիռ կողմերի համար, կներկայացվեն վերջիններիս համար հարմար ձևով, հատկապես տեղական շահագրգիռ կողմերի համար: Հաշվետվությունների հետ ծանոթանալու համար բավականաչափ տրամադրված ժամանակը լրանալուց հետո՝ բավարարելով ազգային օրենսդրության պահանջները (սովորաբար մեկ ամիս), հանրային քննարկումներ կանցկացվեն,՝ ծրագրի հնարավոր ազդեցության հետ առնչվող բնակչությանը հնարավորություն տալով մեկնաբանություններ անելու և հարցեր բարձրացնելու նպատակով: ՇՄԱԳ-ի հաշվետվությունները կվերամշակվեն և կվերջնականացվեն համապատասխան մեկնաբանությունները ներառելուց հետո: Վերջնական հաշվետվություններում ներառված կլինեն հանրային քննարկումների արձանագրությունները:

ԱՆ-ն՝ ԱԾԻԳ-ի միջոցով, կապահովի, որպեսզի ԲՄԿՊ-ն ընդգրկված լինի շինարարական աշխատանքների համար նախատեսված մրցությային փաթեթում, այնպես որ աշխատանքների հավանական մատուցողը կարողանա ապահովել ԲՄԿՊ-ի իրականացման համար կապված ծախսերը: ԲՄԿՊ-ն ինտեգրվելու է աշխատանքների պայմանագրերին և պարտադիր կլինի իրականացման համար, ինչպես աշխատանքների ցանկացած այլ կետ:

ԱԾԻԳ-ի միջոցով ԱՆ-ն ընդհանուր պատասխանատվություն է կրելու ԲՄԿՊ իրականացման համար: Այս նպատակով, ուղղակիորեն կամ վարձած տեխնիկական վերահսկողի միջոցով, ԱԾԻԳ տեղում իրականացնելու է բնապահպանական և սոցիալական հսկողություն, ներառյալ ԲՄԿՊ-ի և ԲԳՄ-ի մոնիտորինգը: Տեխնիկական վերահսկողը պատասխանատու կլինի ցանկացած հարցի բացահայտման համար, որը կարող է առաջանալ ԲՄԿՊ-ում ներկայացրած մեղմացման միջոցառումների անբավարար կիրառությունից, ինչպես նաև ուղղիչ գործողություններ առաջարկելու համար: ԱԾԻԳ-ը պետք է վերահսկի նման ուղղիչ գործողությունների ժամանակին և համարժեք կատարումը: Շինարարական աշխատանքների կապալառուի կողմից առաջացած խնդիրների լուծման ձախողումը կհանգեցնի տուգանային պատժամիջոցների, ինչպես սահմանված է պայմանագրում:

Բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոնի պարտականությունները

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի համաձայն, 1500 մ² շինարարական տարածքը գերազանցող շենքերի առաջարկվող շինարարությունը ենթակա է շրջակա միջավայրի ազդեցության պետական փորձաքննության:

Բնապահպանության և հանքային ռեսուրսների տեսչություն

Բնապահպանության և հանքային ռեսուրսների տեսչությունը, որը ներառում է տարածաշրջանային բնապահպանական 11 տեսչություն, կունենա իրավասություն աշխատավայրերում շրջակա միջավայրի ստուգումներ անցկացնելու՝ շրջակա միջավայրի թույլտվությունների, ինչպես նաև այլ պաշտոնական թույլտվությունների և արտոնագրերի պայմանների համապատասխանությունը վերահսկելու նպատակով:

Քաղաքապետարանի պարտականությունները

Քաղաքապետարանները հաստատում են շինարարական աշխատանքների տեխնիկական առաջադրանքը և շինարարության թույլտվություն է տրամադրում: Քաղաքապետարանները կարգավորում են նաև կենցաղային և շինարարական թափոնների տեղափոխումը, հեռացումը և օգտագործումը:

Աշխատանքներն իրականացնող կապալառուների պարտականությունները

Կապալառուները պատասխանատու կլինեն ԲՄԿՊ-ների հետ կապված աշխատանքների և հարակից ծախսերի ներառման համար նախահաշվային փաստաթղթերում՝ պայմանագրի և ԲՄԿՊ-ի բոլոր պահանջների համաձայն: Կապալառուները պետք է համագործակցի տեխնիկական վերասկողների հետ համապատասխան փաստաթղթերի (լարտոնագրերի և թույլտվությունների) կարգավորման միջոցով:

Բացթողումներ և թույլ կողմեր

Բնապահպանության և հանքային ռեսուրսների տեսչության ինստիտուցիոնալ կարողությունը թույլ է, հիմնականում ֆինանսավորման սակավության, աշխատակազմի և սարքավորումների պակասի պատճառով, ինչը թույլ չի տալիս տեսչությանը իրականացնել կառուցման աշխատանքների բովանդակային վերահսկում: Սա ավելացնում է ԱԾԻԳ-ի պարտականությունը՝ կատարելու աշխատանքների տեխնիկական խիստ վերահսկողություն՝ ընդունելի վերջնական արդյունքների ապահովման համար:

ԲՄԿՊ - ի իրականացման և հաշվետվության մոնիտորինգ

ԱԾԻԳ-ն ընդհանուր պատասխանատվություն է կրում ԲՄԿՊ-ի իրականացման և աշխատանքների բնապահպանական և սոցիալական մոնիտորինգի կազմակերպման համար: Այդ նպատակով ԱԾԻԳ-ն պահում է բնապահպանական և սոցիալական անվտանգության որակավորված մասնագետներ: Աշխատանքների բնապահպանական և սոցիալական մոնիտորինգը կիրականացվի բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի համաձայն, որը մշակվել է որպես հատուկ ՇՄԱԳ աշխատանքի մի մաս: ԲՄԿՊ - ի ամսական մոնիտորինգը կիրականացվի համաձայն բնապահպանական մոնիտորինգի ստուգաթերթիկի (Հավելված 3), որը բնապահպանական հսկողության հարմար արդեն փորձարկված գործիք է, և օգտագործվել է ԱԾԻԳ-ի կողմից արդեն իսկ ավարտված ծրագրերի ընթացքում, ինչպես նաև սոցիալական մոնիտորինգն իրականացվելու է ԲԳՄ-ի իրականացման միջոցով: Համապատասխան հաշվետվություններում կներկայացվեն նաև ֆոտոլուսանկարներ:

Առողջության և աշխատանքային անվտանգության, համայնքի հետ կապված կամ այլ ցանկացած միջադեպեր, որոնք կարող են լինել ծրագրի իրականացման ընթացքում, պետք է անհապաղ հաղորդվեն ՀԲ-ին, առանց հետաձգելու մինչև առաջընթացի հերթական հաշվետվությունը: Այս նպատակով միջադեպերի վերաբերյալ անհապաղ զեկուցելու պահանջը ԱԾԻԳ-ը պետք է ներառի շինարարական աշխատանքներն իրականացնող կապալառի և աշխատանքները վերահսկողների հետ կնքված պայմանագրերում: ԱԾԻԳ-ը միջադեպի մասին ծանուցում ստանալուց հետո պետք է անմիջապես հաղորդի Համաշխարհային բանկին՝ հաշվետու պահին հայտնի բավարար մանրամասների ընդգրկմամբ:

ԱԾԻԳ-ի առաջընթացի մասին կանոնավոր հաշվետվությունները ծրագրի իրականացման մասին կներառեն տեղեկատվություն անվտանգության հարցերի համապատասխանության վերաբերյալ: Բնապահպանական և սոցիալական կատարողականին նվիրված հատուկ գլուխը կլինի Համաշխարհային բանկ ներկայացվող յուրաքանչյուր առաջընթացի հաշվետվության մի մասը: Այն պարունակում է վերլուծական գրառում ԲՄԿՊ-ի իրականացման ընդհանուր կարգավիճակի, հայտնաբերված խնդիրների և ստացված օգնության միջոցառումների վերաբերյալ: Ծրագրի առաջընթացի կանոնավոր հաշվետվությունները պետք է պարունակեն տեղեկատվություն հաշվետու ժամանակահատվածում տեղի ունեցած ցանկացած միջադեպի վերաբերյալ, ինչպես նաև կատարվել է հետագա գործողություններ: Եթե ոչ մի միջադեպ տեղի չի ունեցել, ապա յուրաքանչյուր առաջընթացի հաշվետվություն պետք է վերջինս գրանցի:

Հավելված 1. ԲՄԱԳ հաշվետվության առաջարկվող կառուցվածքը

Ամփոփագիր

Ներածություն

Տեխնիկական և բնապահպանական չափորոշիչներ և կանոնակարգեր

Բնապահպանական սկրինինգ

Հանրային մասնակցություն

Խոցելի շրջակա միջավայրի օբյեկտների և հնարավոր ազդեցությունների ծրագիր

Այլընտրանքներ

Ծրագրի նկարագրություն

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մեթոդաբանություն

Բնապահպանական և սոցիալական հիմունքներ

Ակնկալվող ազդեցություններ և մեղմացում

Բնապահպանական կառավարման պլան

(10 էջից ոչ ավելի)

ԳԼՈՒԽ 1. Ներածություն

ԳԼՈՒԽ 2. Իրավական և քաղաքականության հիմքեր

ԳԼՈՒԽ 3. Տեխնիկական և բնապահպանական չափորոշիչներ և կանոնակարգեր

ԳԼՈՒԽ 3. Բնապահպանական սկրինինգ

ԳԼՈՒԽ 4. Ֆիզիկական և բնական միջավայր

ԳԼՈՒԽ 5. Խոցելի շրջակա միջավայրի օբյեկտներ և հնարավոր ազդեցություններ

ԳԼՈՒԽ 6. Ազդեցության մեղմացում

ԳԼՈՒԽ 7. Բնապահպանական կառավարման պլան

Հավելված 1 Բնապահպանական կառավարման մատրից

Հավելված 2. Հասարակական քննարկումներ

Հավելված 3. Հղումներ

Հավելված 4. Քարտեզներ, գծապատկերներ, նկարներ

ՃՄԱԳ հաշվետվության Հավելված 1: Բնապահպանական կառավարման ուղեցույցներ կապալառուների համար (տրամադրվում է ՀԲ-ի կողմից)

Ճանապարհներ և հետիոտներ

Վերակառուցման աշխատանքներ իրականացնելու նպատակով շինարարական աշխատանքների ընթացքում գուցե անհրաժեշտ լինի փակել կամ շեղել որոշ մայրուղիներ և (կամ) հետիոտների ճանապարհներ՝ մշտապես կամ ժամանակ առ ժամանակ: Կապալառուն պետք է աշխատանքներ իրականացնելիս տրանսպորտի և (կամ) հետիոտների համար այլընտրանքային երթուղի տրամադրելու համար միջոցառումներ ձեռնարկի:

Որևէ փողոց կամ հետիոտնի ճանապարհ փակելուց կամ այլ կերպ միջամտելուց՝ Կապալառուն պետք է կատարի այնպիսի միջոցառումներ, որոնք այդ փողոցի կամ հետիոտնային երթևեկի համար խիստ անհրաժեշտ և կիրառելի կլինեն:

Եթե վերակառուցման աշխատանքները խոչընդոտում են գոյություն ունեցող հանրային կամ մասնավոր ճանապարհներին, Կապալառուն պետք է կառուցի այլընտրանքային ուղիներ, որտեղ հնարավոր է: Կառուցման և լուսավորության ստանդարտները բոլոր առումներով պետք է հարմար լինեն երթևեկության ցանկացած ձևի համար՝ օգտագործելով առկա հնարավորությունները: Այլընտրանքային ուղիները պետք է կառուցվեն ցանկացած միջամտությունից առաջ և պահպանվեն՝ երթևեկության հոսքերը համարժեքորեն ապահովելու համար:

Անհրաժեշտ ժամանակահատվածում Կապալառուն պարտավոր է ապահովել բոլոր կանոնադրական և հանրային տեղեկատվության ծանուցումները տրամադրելու, տեղադրելու և պահպանելու համար:

Բեռնատարների և շինարարական մեքենաների տեղաշարժ

Կոշտ կամ հեղուկ շինանյութեր և թափոններ տեղափոխելիս կապալառուն պետք է խիստ միջոցներ ձեռնարկի՝ ճանապարհներին աղբի թափվելը նվազագույնի հասցնելու համար՝ ապահովելով բոլոր տրանսպորտային միջոցների կողային և վերևի հատվածների ծածկը, նաև այնպիսի բեռնվածությունը, որ կանխվի կոշտ և հեղուկ շինանյութի թափվելը՝ ցեխի, ավազի, այլ նյութերի և բեկորների:

Կապալառուն պետք է նաև ձեռնարկի բոլոր միջոցները՝ նախքան շինարարական մտնելը առաքման մեքենաների մայրուղիներում կայանումից հնարավորինս խուսափելու համար:

Ճանապարհային երթևեկության անվտանգության միջոցառումներ

Կապալառուն պետք է տրամադրի, տեղադրի և պահպանի ճանապարհային երթևեկության այնպիսի նշաններ, ճանապարհային գծանշումներ, լամպեր, արգելապատնեշներ և երթևեկության վերահսկման ազդանշաններ և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են շինհրապարակի շրջակայքում երթևեկության անվտանգության ապահովման համար: Կապալառուն չպետք է սկսի որևէ աշխատանք, որը խանգարում է հանրային ավտոճանապարհներին և մայրուղիներին, քանի դեռ ամբողջությամբ չեն գործել երթևեկի անվտանգության բոլոր միջոցառումները:

Մուտք դեպի շինհրապարակ

Վերակառուցման աշխատանքներն իրականացնելիս Կապալառուն պետք է ձեռնարկի բոլոր միջոցները՝ կանխելու կամ նվազեցնելու հարակից գույքի սեփականատերերին, վարձակալներին որևէ անհանգստություն կամ անհարմարություն ստեղծելը: Կապալառուն պետք է պահպանի վերակառուցման տարածքի ամբողջ մասի հասարակական ու մասնավոր մուտքը անվտանգ ճանապարհով և ստանդարտով՝ կնքված պայմանագրի սկզբունքներին համահունչ: Անհրաժեշտության դեպքում Կապալառուն պետք է տրամադրի ծրագրի ազդեցությանն ենթարկվող անձանց բավարարվածությունն ապահովելու նպատակով փոխադրման ընդունելի այլընտրանքային ձևեր:

Առկա տեղադրումների պաշտպանություն

Կապալառուն պետք է պատշաճ կերպով պահպանի բոլոր շենքերը, շինությունները, աշխատանքները, ծառայությունները կամ սարքերը վնասներից, խանգարումներից կամ վատթարացումից՝ կոնցեսիայի ժամանակահատվածում: Կապալառուն պետք է ձեռնարկի բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են կոնցեսիոն ժամանակահատվածում բոլոր շենքերի, շինությունների, խողովակների, մալուխների, կոյուղագծերի, երկաթուղիների և այլ սարքերի պահպանման համար: Առկա ենթակառուցվածքների աշխատանքների ընթացքում հասցրած վնասի դեպքում Կապալառուն պետք է ստանձնի դրա վերականգնման պատասխանատվությունը:

Այլ կառույցների օգտագործում

Կապալառուն չպետք է տեղադրի գործարանների, ժամանակավոր աշխատանքների նյութերի/պարագաների պահեստները գոյություն ունեցող կառույցների կամ դրանց տակ կամ հարևանությամբ գտնվող, ինչպիսիք են կամուրջները, գետնանցումները, ջրահեռացման ուղիները, պատերը և պատնեշները, այնպես, որ այդ կառույցները վտանգվեն:

Աղմուկի և փոշու վերահսկում

Կապալառուն պետք է ձեռնարկի բոլոր գործնական միջոցները՝ վերակառուցման/կառուցման վայրերից փոշուց և աղմուկից վնասները նվազագույնի հասցնելու համար:

Վերջինս ներառում է.

- Պահպանել բնակելի թաղամասերում/դրանց հարևանությամբ գտնվող վայրերում աշխատանքային նորմալ ժամերը
- Սարքավորումների աշխատանքային վիճակի պատշաճ պահպանում՝ նվազագույնի հասցնելու համար մեխանիկական թրթռումը, ճռռոցից և ճռճոցից արտաստվող աղմուկը, ինչպես նաև մեքենաներից արտանետումները կամ գոլորշիները
- Սարքավորումների անջատումը, երբ դրանք ուղղակիորեն չեն օգտագործվում:

Ջրի մատակարարման հետ կապված բախումներ

Կապալառուն պետք է ապահովի աշխատուժի համարժեք մուտքը անվտանգ ջրամատակարարման համակարգին, որը չի տրամադրվում ի վնաս տեղի բնակչությանը մատուցվող ծառայությունների: Եթե սահմանափակ ջրային ռեսուրսների համար մրցակցության ռիսկ կա, ապա Կապալառուն պետք է ապահովի, որ տեղական

մատակարարումը չազդի, և անհրաժեշտության դեպքում աշխատուժին տրամադրվի այլընտրանքային աղբյուր (օրինակ՝ բաքերում կամ այլ կերպ պահեստավորված ջուր):

Թափոնների հեռացում

Կապալառուն պետք է պայմանավորվի Պատվիրատուի քաղաքապետարանի հետ շինարարական թափոնների հեռացման կազմակերպման վերաբերյալ: Քաղաքապետարանը կոշտ թափոնների վերացման համար պետք է սահմանի աղբավայր: Եթե վտանգավոր թափոններ առաջանան և հանկարծ հայտնաբերվեն, Կապալառուն պետք է այդ մասին տեղեկացնի Պատվիրատուի քաղաքապետարանին և խստորեն հետևի Պատվիրատուի ցուցումներին այդպիսի թափոնների հեռացման վերաբերյալ:

Հողի պաշտպանություն

Կապալառուն պետք է ձեռնարկի բոլոր գործնական քայլերը՝ հողի դեգրադացիայից և քայքայումից խուսափելու համար: Ծանր մեքենատեխնիկայի օգտագործումը պետք է հնարավորինս սահմանափակվի՝ հողի սեղմումից/խտացումից խուսափելու համար:

Ծառերի և այլ բուսականության պաշտպանություն

Կապալառուն հնարավորության դեպքում պետք է խուսափի ծառերի կորստից և այլ բուսականությանը վնասելուց: Վերակառուցման/կառուցման տարածքի ներսում կամ հարակից տարածքներում կանաչ ծածկույթի վրա բացասական ազդեցությունները պետք է նվազագույնի հասցվեն՝ շինարարական նյութերի և ծանր տեխնիկայի համար նախատեսված կայանատեղերի կուտակման և պահեստավորման վայրերի համարժեք ընտրությամբ:

Արտակարգ իրավիճակներում կոնտակտային տվյալներ և ընթացակարգեր

Կապալառուն պատրաստում և պահպանում է արտակարգ իրավիճակներում կոնտակտային տվյալների վերաբերյալ տեղեկատվությունը յուրաքանչյուր վերակառուցվող/կառուցվող տարածքի համար, որը ցուցադրվում է տեսանելի/հասանելի տեղում ամբողջ անձնակազմի համար: Արտակարգ իրավիճակներում կոնտակտային տվյալների վերաբերյալ տեղեկատվությունը ներառում է հեռախոսահամարներ և տեղական իշխանություններին/ծառայություններին ծանուցելու եղանակը/ձևը հրդեհի, առողջության համար անհետաձգելի իրավիճակների, հաղորդակցության խախտումների, վտանգավոր նյութերի արտակարգ արտանետման և այլնի դեպքում՝ արագ գործողություններ ձեռնարկելու համար:

Վերակառուցվող/կառուցվող տարածքի մաքրում՝ ավարտին

Կապալառուն պետք է մաքրի բոլոր աշխատանքային տարածքներն ինչպես վերակառուցման/կառուցման վայրում և դրանից դուրս, այնպես էլ մուտքերը՝ աշխատանքները շարունակելիս, նաև երբ այլևս չեն պահանջվում շինարարական աշխատանքներ: Ամբողջ ավելցուկային հողը և նյութերը, ժամանակավոր ճանապարհները, բույսերը, ցանքատարածությունները, գրասենյակները և ժամանակավոր ցանկապատերը պետք է հեռացվեն, փոսերը լցվեն, և հողի մակերեսը վերականգնվի իր նախնական վիճակին մոտ, ինչքան որ թույլատրում են պայմանները:

Հավելված 2. Ծրջակա միջավայրի և սոցիալական կառավարման պլան

ԲԱԺԻՆ Ա: ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՐԱԳՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ			
Երկիր			
Ծրագրի անվանումը			
Ենթաձրագրի անվանումը			
Ծրագրի շրջանակներում նախատեսվող միջոցառումներ			
Ինստիտուցիոնալ կարգավորում (ՀԲ)	Ծրագրի թիմի ղեկավար	Անվտանգության վերահսկող	
Իրականացման կարգավորում (ՀՀ)	Իրականացնող կազմակերպություն	Աշխատանքների վերահսկողություն	Կապալառու
ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ			
Հաստատության անվանում			
Կառուցապատման տարածքի տեղակայում, հասցե			
Հողի սեփականատերը			
Տարածքի ֆիզիկական և բնապահպանական, սոցիալատնտեսական միջավայրի նկարագրություն			
Ծինարարության համար անհրաժեշտ նյութերի տեղակայումը (հատկապես՝ քար, ջուր, սարքավորումներ) և վերջիններիս հեռավորությունը շինարարակից			
ՕՐԵՆՍԳՐՈՒԹՅՈՒՆ			
Ծրագրի իրականացումը կարգավորող ազգային և տեղական օրենսդրություն, ինչպես նաև շինարարության թույլտվության արտոնագիր			
ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ			
Որտեղ և երբ են տեղի ունեցել հանրային քննարկումները			
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ			
<p>Հավելված 1: Կառուցապատման տարածքի քարտեզ/լուսանկար</p> <p>Հավելված 2: Ծինթույլտվություն (ինչպես պահանջվում է)</p> <p>Հավելված 3: Ծինարարական աղբի տեղադրման վերաբերյալ թույլտվություն</p> <p>Այլ կարավորումներ/թույլտվություններ՝ ինչպես պահանջվում է</p>			

ԲԱԺԻՆ Բ: ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՃՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ / ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍԿՐԻՆԻՆԳ			
	Գործընթացներ	Կարգավիճակ	Տրիգերային գործողություններ
Կառուցապատման տաածքում իրականացվող գործընթացը կներառի՝ հետևյալներից որևէ մեկը	Ա. Ծինության վերանորոգում	<input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Կամ <input type="checkbox"/> Ոչ	Եթե Այո՝ տես բաժին Ա/Բ
	Բ. Նոր շինության կառուցում	<input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ	Եթե Այո՝ տես բաժին Ա/Բ
	Գ. Կեղտաջրերի սեփական մաքրման համակարգ	<input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ	Եթե Այո՝ տես բաժին Գ
	Դ. Պատամաշակության հուշարձաններ և տարածքներ	<input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ	Եթե Այո՝ տես բաժին Դ
	Ե Հողերի գավթում ¹	<input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ	Եթե Այո՝ տես բաժին Ե
	Զ. Վտանգավոր կամ տոքսիկ նյութեր ²	<input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ	Եթե Այո՝ տես բաժին Զ
	Է. Ազդեցություն անտառների և/կամ պահպանվող տարածքների վրա	<input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ	Եթե Այո՝ տես բաժին Է
	Ը. Բժշկական թափոնների մշակում/կառավարում	<input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ	Եթե Այո՝ տես բաժին Ը
	Թ. Երթևեկության և հետիոտների անվտանգություն	<input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ	Եթե Այո՝ տես բաժին Թ
	Ժ. Ուղղաթիռի վայրէջքի հրապարակի անվտանգություն	<input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ	Եթե Այո՝ տես բաժին Ժ

¹ Հողերի գրավումը ներառում է մարդկանց տեղաշարժ իրենց բնակավայրից, հողի հանդեպ սեփականության իրավունքի խախտում (հողատարածքների գավթում, տվյալ հողատարածքի վրա բնակվող կամ աշխատանքնային գործունեություն ծավալով մարդկանց իրավունքների խախտում)

² Տոքսիկ / վնասակար նյութերը ներառում են ոչ միայն ասբեստ պարունակող նյութեր, այլև տոքսիկ ներկեր, վտանգավոր լուծույթներ, լուծիչներ, կապարի ներկի հեռացում և այլն

ԲԱԺԻՆ Գ: ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
<p>0. Ընդհանուր դրույթներ</p>	<p>Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն</p>	<p>(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող տեղական վարչությունները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ</p> <p>(b) Հանրությունը պետք է իրազեկվի համապատասխան լրատվամիջոցների կամ հանրության համար մատչելի կայքերի միջոցով, ներառյալ շինհրապարակը</p> <p>(c) Կառուցման համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել</p> <p>(d) Կապալառու և պաշտոնապես պետք է համաձայնվի, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա</p> <p>(e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ</p> <p>(f) Կապալառուների և ենթակապալառուների կողմից աշխատանքի անվտանգության տեղական օրենսդրության համապատասխանության ապահովում</p> <p>(g) Անվտանգության դասընթացների անցկացում, որոնք իրականացվում են տարբեր ոլորտների մասնագետների կողմից</p> <p>(h) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն միջազգային ընդունված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)</p> <p>(i) Շինհրապարակի մուտքի մոտ ծրագրի բոլոր աշխատակիցներին դիմակների և այլ համապատասխան անձնական պաշտպանական միջոցների մատակարարում: Շնչուղիների հիվանդության նշաններով մարդիկ, որը չի ուղեկցվում մարմնի ջերմաստիճանի բարձրացմամբ, պետք է պարտադրվեն դիմակ կրելուն:</p> <p>(j) Շինհրապարակում ապահովել ձեռքերը լվանալու միջոցներով՝ հոսող ջուր, ձեռքի օճառ, ձեռքի պլոհոլային հիմքով մաքրող/ախտահանող միջոցներ և ձեռքի չորացման սարքեր, ապահովել դրանց պարտադիր օգտագործումը շինհրապարակ մուտք/ելք գործելիս և ընդմիջումների ժամանակ՝ հայերեն լեզվով պատասխանների տեղադրման միջոցով, որտեղ պարզ նշված են վերոնշյալ գործողությունները</p> <p>(k) Բոլոր աշխատողներին պատրաստել շնչառական հիգիենայի, հագի վարվելակարգի և ձեռքի հիգիենայի կանոնների պահպանմանը ցուցադրումների և մասնակցային մեթոդների միջոցով</p> <p>(l) Հավաքարների/մաքրող անձնակազմին պատրաստել մաքրման և աղբի հեռացման ճշգրիտ գործընթացներին</p> <p>(m) Առողջության և անվտանգության չափանիշներին և COVID-19- ին համապատասխանող աշխատանքային անվտանգ պայմանների ապահովում, ինչպես պահանջվում է Հայաստանի օրենսդրությամբ</p> <p>(n) Կարգավորել աշխատանքային մեթոդները՝ աշխատողների միջև շփումը նվազեցնելու կամ նվազագույնի հասցնելու նպատակով</p> <p>(o) Համոզվել, որ առկա են արձանագրությունները՝ աշխատավայր մուտք գործելու ընթացակարգերն ու բժշկական հետազոտություններն ապահովելու համար</p> <p>(p) Ապահովել հասարակական տարածքների, սարքավորումների, գործիքների և թափոնների պարբերաբար ախտահանման համար արձանագրությունների առկայությունը և դրանց հետևելը</p> <p>(q) Ցանկացած աշխատող, որն ունի շնչառական հիվանդության ախտանիշներ (ջերմություն + դող կամ հազ) և որի մոտ հնարավոր է COVID-19 բացահայտվի, պետք է անհապաղ հեռացվի աշխատավայրից և թեստավորվի վիրուսի առկայության համար մոտակա հիվանդանոցում</p> <p>(r) Ծրագրի ղեկավարությունը պետք է գտնի ամենամոտ գտնվող հիվանդանոցը, որն ունի թեստավորման հնարավորություններ/միջոցներ, ուղեգրի աշխատողներին և վճարի թեստի համար, եթե այն անվճար չէ:</p>
<p>Ա.և Բ. Ընդհանուր կառուցման</p>	<p>Օդի որակ</p>	<p>(a) Պննմատիկ դրելով անցք բացելու/ պատերի քանդման ընթացքում գոյացող փոշին պետք է չեզոքացվի ընթացիկ ջրի ցողումով կամ էլ շինհրապարակում փոշուց պաշտպանող հատուկ թաղանթների տեղադրումով</p> <p>(b) Շրջակա տարծքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով</p> <p>(c) Շինարարական աղբի / թափոնների բաց այրում շինհրապարակում տեղի չի ունենա</p>

շինարարական աշխատանքներ		(d) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի:
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում գեներատորների շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականության սկզբնական սարքերը պետք է ծածկվեն, իսկ սարքավորումը պետք է հնարավորին հեռու տեղադրվի բնակելի տարածքներից:
	Ջրի որակ	(a) Շինհրապարակում կգործեն համապատասխան հողերի էրոզիայի և ցեխաջրերի վերահսկման միջոցառումներ, ինչպիսիք են ծղոտի հակեր և/ կամ պատնեշներ ցեխաջրերի արտահոսքը շինհրապարակից, ինչը առաջացնում է մոտակա գետերի պղտորում:
	Թափոնների կառավարում	(a) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն քանդման և շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: (b) Քանդման և շինարարության արդյունքում գոյացող քարային թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից, օրգանական, հեղուկ և քիմիական թափոններից դեռ շինհրապարակում և պահեստավորվեն համապատասխան կոնտեյներներում: (c) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի քաղաքապետարանի կողմից տրված տեղեկանքին համապատասխան (d) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն (e) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները բազմանվագ օգտագործել (բացի ասբեստային նյութերից):
Գ. Կեղտաջրերի հեռացման համակարգ	Ջրի որակ	(a) Սանիտարական թափոնների և կոյուղաջրերի հեռացումը շինհրապարակից պետք է համաձայնեցված լինի տեղական իշխանությունների հետ (b) Կոյուղաջրերը պետք է մաքրվեն ազգային ուղեցույցներով նախատեսված կոյուղաջրերի մաքրման նվազագույն պահանջներին համապատասխանեցնելու նպատակով (c) Կոյուղու նոր համակարգի մոնիտորինգ պետք է անցկացվի՝ (մինչև շահագործումը և շահագործումից հետո) (d) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից ջրի հոսքը չի աղտոտի բնական ջրամբարները:
Դ. Պատմական շինություններ	Մշակութային ժառանգություն	(a) Պետք է ապահովվեն պայմաններ հողային աշխատանքների ընթացքում պատահական հնագիտական գտածոների գրանցման, համապատասխան պատասխանատու մարմիններին տեղեկացման և անհրաժեշտության դեպքում շինարարական աշխատանքների հետաձգման կամ էլ ընթացքի փոփոխության համար:
Ե. Հողերի գավթում	Հողի հատկացման ընթացակարգ	(a) Եթե հողատարածքի ուսումնասիրություն չի նախատեսվում, բայց պահանջվում է կամ էլ առկա է հողի օրինական կամ էլ անօրինական սեփականատերերի եկամուտների անսպասելի կորստի սպառնալիք՝ Համաշխարհային բանկի թիմը ղեկավարը պետք է անհաապաղ տեղեկացվի. (b) Պետք է իրականացվի հողի հատկացման հաստատված ընթացակարգ (եթե պահանջվում է ծրագրով)
Զ. Տոքսիկ նյութեր	Ասբեստ պարունակող նյութերի կառավարում	(a) Շինհրապարակում ասբեստ պարունակող նյութերի առկայության դեպքում, վերջիններ պետք է հստակ պիտակավորվեն որպես վտանգավոր նյութեր, (b) Հնարավորության դեպքում ասբեստ պարունակող նյութերը կհավաքվեն համապատասխան կնքվող կոնտեյներներում՝ վնասակար ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով, (c) Ասբեստ պարունակող նյութերը, մինչև հեռացումը (եթե հեռացումն անհրաժեշտ է) պետք է խոնավեցվեն՝ փոշու քանակը պակասեցնելու նպատակով (d) Ասբեստ պարունակող նյութերը պետք է մշակվեն և հեռացվեն փորձառու մասնագետների կողմից (e) Եթե ասբեստ պարունակող նյութերը ժամանակավոր են պահեստավորվում, թափոնները պետք է ապահով տեղավորվեն փակվող կոնտեյներներում, որոնք համապատասխանաբար նշվում են: Անվտանգության միջոցառումներ պետք է ձեռնարկվեն՝ շինհրապարակից վերոնշյալ թափոնների անօրինական հեռացումը կանխելու նպատակով:

	<p>Տոքսիկ / վտանգավոր թափոնների կառավարում</p>	<p>(f) Հեռացված արքեստ պարունակող նյութերը չեն կարող կրկնակի օգտագործվել:</p> <p>(a) Տոքսիկ կամ վտանգավոր նյութերը ժամանակավոր պահեստավորումը շինհրապարակում պետք է կատարվի ապահով կոնտեյներներում, որոնց պիտակների վրա մանրամասնորեն պետք է գրված լինի կազմը, հասկությունը և մշակման վերաբերյալ տեղեկատվություն</p> <p>(b) Վտանգավոր թափոնները պետք է բեռնված լինեն վակուումային կոնտեյներներում՝ քայքայումը և արտահոսքը կանխելու համար</p> <p>(c) Թափոնները պետք է տեղափոխվեն հատուկ արտոնագիր ունեցող մեքենաներով արտոնագրված հաստատություններ</p> <p>(d) Տոքսիկ կազմ ունեցող ներկանյութերը կամ լուծույթները կամ էլ կապար պարունակող ներկեր չեն կիրառվի</p>
<p>Է. Բժշկական թափոնների հեռացում</p>	<p>Բժշկական թափոնների կառավարման կառուցվածքը</p>	<p>(a) Ծինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն նորակառույց կամ վերանորոգվող բուժհաստատությունում պետք է ապահովվի բավարար ենթակառուցվածքներ բժշկական թափոնների մշակման և հեռացման համար, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> ▪ Հատուկ հարմարություններ առողջապահական թափոնները այլ տեսակի թափոններից տարանջատելու համար (ներառյալ կեղտոտ գործիքներ “սրածայրեր”, կենսաբանական հյուսվածքներ և հեղուկներ), ▪ Բժշկական թափոնների կուտակման համար անհրաժեշտ հարմարությունները առկա են ▪ Եթե թափոնների մշակումն իրականացվում է բուժհաստատությունում, համապատասխան պետք է առկա լինեն թափոնների հեռացման համար անհրաժեշտ համապատասխան միջոցներ, սարքին վիճակում <p>(b) Թափոնների քանակի նվազեցում, վերաօգտագործում և վերամշակում. ԲԿ-ն պետք է հաշվի առնի թափոնների առաջացումը նվազագույնի հասցնելու պրակտիկան և ընթացակարգերը՝ չխախտելով հիվանդի հիգիենան և անվտանգության նկատառումները</p> <p>(c) Նմուշների, ռեակտիվների, դեղագործական և բժշկական պարագաների առաքում և պահպանում. ԲԿ-ն պետք է կիրառի պրակտիկա և ընթացակարգեր՝ նվազագույնի հասցնելու վտանգավոր բժշկական ապրանքների առաքման, ստացման և պահեստավորման հետ կապված ռիսկերը</p> <p>(d) Թափոնների տարանջատում, փաթեթավորում, գույների կողավորում և պիտակավորում. ԲԿ-ն պետք է խստորեն իրականացնի թափոնների տարանջատում՝ առաջացման կետում: Պետք է պահպանել թափոնների փաթեթավորման, գույնային կողավորման և պիտակավորման միջազգայնորեն ընդունված մեթոդները</p> <p>(e) Տեղում հավաքում և փոխադրում. ԲԿ-ն պետք է կիրառի պրակտիկա և ընթացակարգեր՝ պատշաճ փաթեթավորված և պիտակավորված թափոնները ժամանակին հեռացնելու համար՝ օգտագործելով նշանակված պատգարակներ/ սայլեր և ուղիներ: Պետք է պարբերաբար իրականացվի համապատասխան գործիքների և տարածքների ախտահանում: Պետք է ապահովվի ներգրավված օժանդակ բուժաշխատողների, ինչպիսիք են հավաքարարները, հիգիենան և անվտանգությունը</p> <p>(f) Թափոնների պահեստավորում. պահեստային տարածքների պատշաճ պահպանում և ախտահանում պետք է իրականացվի: COVID-19 բռնկման ժամանակ վարակիչ թափոնները պետք է հեռացվեն ԲԿ-ի պահեստային տարածքից՝ 24 ժամվա ընթացքում</p> <p>(g) Փոխադրում և վերացում թափոնների կառավարման արտաքին օբյեկտներում. պետք է օգտագործվեն տեղական ինքնակառավարման մարմինների կամ մասնավոր հատվածի կողմից տրամադրվող թափոնների հեռացման օբյեկտները: Թափոնների կառավարման արտաքին այդպիսի օբյեկտները կարող են ներառել այրիչներ, վտանգավոր թափոնների աղբավայրեր: Պետք է իրականացվի թափոնների կառավարման արտաքին այդպիսի օբյեկտների պատշաճ ստուգում՝ դրանց տեխնիկական համարժեքությունը, գործընթացի հզորությունը, կատարողականի գրառումը և օպերատորի կարողություններն ուսումնասիրելու նպատակով: Բացեր հայտնաբերելու դեպքում պետք է առաջարկվեն շտկող միջոցներ և համաձայնեցվեն կառավարության կամ մասնավոր հատվածի օպերատորների հետ:</p> <p>(h) ԲԿ-ում տեղի ունեցած արտակարգ միջադեպերը կարող են ներառել արտահոսք, վարակիչ նյութերի կամ ճառագայթման մասնագիտական ազդեցություն, շրջակա միջավայրին վարակիչ կամ վտանգավոր նյութերի պատահական արտանետում, բժշկական սարքավորումների անսարքություն, պինդ թափոնների և կեղտաջրերի մաքրման կայանների անսարքություն և հրդեհ: Արտակարգ իրավիճակների արձագանքման պլանը (ԱԻԱՊ), որը համապատասխանում է ռիսկի մակարդակին, պետք է մշակվի և իրականացվի շահագործման ընթացքում:</p>

<p>Ը. Հետիոտների և երթևեկության ապահովություն</p>	<p>Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ</p>	<p>(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառում պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> ▪ Պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինարարական հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինարարական մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության գոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինարարական փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում:
<p>Թ. Սոցիալական ռիսկերի կառավարում</p>	<p>Հասարակայնության հետ կապի կառավարում</p>	<p>(a) Նշանակել համայնքի ներկայացուցիչ, որը պատասխանատու է տեղի բնակչության հետ կապի և խնդրանքների / բողոքների ստացման համար</p> <p>(b) Խորհրդակցել տեղական համայնքների հետ՝ բացահայտելու և ակտիվորեն կառավարելու դրսի աշխատուժի և տեղական բնակչության միջև հնարավոր հակասությունները</p> <p>(c) Բարձրացնել տեղական համայնքի իրազեկությունը սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների ռիսկերի վերաբերյալ, որոնք կապված են դրսի աշխատուժի ներկայության հետ և ներառել տեղական համայնքներն իրազեկման գործողություններում:</p> <p>(d) Հնարավորության սահմաններում աշխատանքները պլանավորել ոռոգման սեզոնից դուրս՝ ծառայությունների խափանումից խուսափելու / նվազագույնի հասցնելու համար: Տեղի բնակչությանը տեղեկացնել շինարարության և աշխատանքային գրաֆիկների, ծառայությունների ընդհատման, երթևեկի շրջանցման երթուղիների և ավտոբուսների ժամանակավոր երթուղիների, պայթեցման և քանդման մասին, ըստ անհրաժեշտության:</p> <p>(e) Սահմանափակել շինարարական գործողությունները գիշերային ժամերին: Անհրաժեշտության դեպքում ուշադիր պլանավորել գիշերային աշխատանքը և նախապես տեղեկացնել համայնքին:</p> <p>(f) Պատշաճ կերպով նշել և ցանկապատել աշխատանքային տարածքը</p> <p>(g) Մշակված հողամասերի կամ որևէ մասնավոր սեփականության տարածքում շինարարական նյութերի և թափոնների ժամանակավոր պահեստավորումը բացառել</p> <p>(h) Հատկացնել շինարարական նյութերի և թափոնների ժամանակավոր պահման վայրեր, որպեսզի երթևեկության և հետիոտների ազատ տեղաշարժը չխոչընդոտվի:</p>
	<p>Աշխատանքի կառավարում</p>	<p>(i) Հնարավորության սահմաններում չտեղակայել աշխատանքային ճամբարները տեղական համայնքներին հարող տարածքում</p> <p>(j) Տեղակայել և շահագործել աշխատողների ճամբարները՝ խորհրդակցելով հարևան համայնքների հետ</p> <p>(k) Հնարավորության սահմաններում տեղական համայնքներից հավաքագրել ոչ հմուտ կամ քիչ հմուտ աշխատողների: Որտեղ և երբ դա հնարավոր է, պետք է տրամադրվի աշխատողների հմտությունների ուսուցում՝ համայնքային բնակչության մասնակցությունը խթանելու համար:</p> <p>(l) Աշխատավարում ապահովել համապատասխան սանհանգույցներ (զուգարաններ և լվացվելու տարածքներ) տաք և սառը հոսող ջրի, օճառի և ձեռքի չորացման սարքերի համարժեք պաշարներով: Ստեղծել ժամանակավոր սեպտիկ բաքի համակարգ՝ ցանկացած բնակելի աշխատանքային ճամբարի համար՝ առանց հարակից ջրերի աղտոտման</p> <p>(m) Համայնքային բնակչության հետ հարաբերությունների ընդհանուր կառավարման վերաբերյալ աշխատողների տեղեկացվածության մակարդակի բարձրացում, միջազգային պրակտիկային համապատասխան վարքագծի</p>

		կանոնների ձևակերպում և դրանց խստորեն կիրառում, ներառյալ աշխատողների աշխատանքից հեռացումը և համապատասխան ծավալի ֆինանսական տույժերը:
Ժ. Ուղղաթիռի վայրէջքի հրապարակի շահագործում	Ուղղաթիռի վայրէջքի հրապարակի շահագործման ընթացքում հանրային անվտանգություն	<p>(a) Ուղղաթիռի տեղակայման համար բնակավայրերից բավարար հեռավորության պահպանում</p> <p>(b) Ծնչուղիների և ականջների պաշտպանության սարքերի տրամադրում ուղղաթիռի անձնակազմին</p> <p>(c) Թռիչքային ուղիների պլանավորում՝ զգայուն տարածքների վրա կարճ հեռավորության ավելորդ թռիչքներից խուսափելու համար</p> <p>(d) Աղմուկի նվազեցման թռիչքային ուղիների օգտագործումը՝ կիրառելով վայրէջքի և մեկնման մեթոդներ, որոնք նվազագույնի են հասցնում տհաճ աղմուկը</p> <p>(e) Խոցելի գոտիներում շենքերի մեկուսացում և կրկնակի ապակեպատում</p> <p>(f) Գիշերային թռիչքների սահմանափակում՝ անհարմար ժամերին միայն ծանր հիվանդներին տեղափոխում</p> <p>(g) Ապահովել մոտեցման լուսավորության համակարգ, որտեղ ցանկալի և գործնական է նշել մոտեցման նախընտրելի ուղղությունը: Ամբողջ լուսավորությունը պետք է ապահովվի անխափան սնուցման համակարգով (UPS)</p> <p>(h) Խուսափել ուղղաթիռի շուրջ աղբամանների, ավազի / ցեխի կույտերի տեղադրումից</p> <p>(i) Վառելիքի կայանի համար ուղղաթիռի վայրէջքի հրապարակում տրամադրել տարածք (պահպանել վառելիքի կայանի առնվազն 3 մ շառավղով բաց տարածությունը որպես վտանգավոր տարածք): Վառելիքի կայանը վերազինել համապատասխան կրակմարիչներով: Գնումից առաջ հստակեցնել տեխնիկական մասնագրերը՝ ներառելով միջոցառումներ, որոնք բացում են վառելիքի արտահոսք. համապատասխան մետաղական կառուցվածք և դիզայն, մոնտաժ, ամրացնող հարմարանքները և էլեկտրական կցամասերը պետք է վկայագրվեն որպես անվտանգ: Պատրաստել և իրականացնել վառելիքի արտահոսքի կանխարգելման և արձագանքման պլան:</p> <p>(j) Պատրաստել և իրականացնել Արտակարգ իրավիճակների պատրաստվածության և արձագանքման պլան: Ծրագրի նպատակն է կանխատեսել, թե ինչ ազդեցություն կարող են ունենալ ուղղաթիռի արտակարգ /վթարային/ իրավիճակը մարդկանց կյանքի, ունեցվածքի և գործողությունների վրա, և պատրաստել գործողության դասընթաց կամ դասընթացներ՝ այդ ազդեցությունները նվազագույնի հասցնելու համար, մասնավորապես՝ կյանքեր փրկելու հարցում: Ծրագիրը պետք է.</p> <ul style="list-style-type: none"> - ապահովի ուղղաթիռի վայրէջքի հրապարակում կամ դրա մերձակայքում տեղի ունեցող արտակարգ իրավիճակներում ձեռնարկվելիք գործողությունների համակարգումը: Սարքավորումները պետք է մատչելի լինեն՝ ապահովելու համար բոլոր ստորաբաժանումների արդյունավետ համագործակցությունը միմյանց հետ արտակարգ իրավիճակների ժամանակ: Պլանը համակարգելու նպատակով պետք է դիտարկվի շենքի ներսում կառավարման կենտրոնի տեղակայումը - Մանրամասներ տրամադրել անհատներին կամ ստորաբաժանումներին՝ արտակարգ իրավիճակների պլանը նախաձեռնելու համար անհրաժեշտ գործողությունների մասին - Ներառել ուղղաթիռից հեռացող ուղևորներին օժանդակելու ընթացակարգերը՝ նրանց ուղղելով դեպքից հետո ապահով վայր:

Բաժին Գ: ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակացույց	Նվազեցնող միջոցառումների նպատակը	Կատարող
<i>Շինարարության փուլ</i>						
1.						
2.	-					
n.						
<i>Գործունեության փուլ</i>						
1.						
2.						
n.						

Հավելված 3. Տեղում իրականացվող բնապահպանական մոնիտորինգի ստուգաթերթիկ

Տեղադրություն			
Կապալառուի անվանումը			
Վերադասի անունը			
Տեխսիկիչ			
Տեղամասի այցելության ամսաթիվը			
Շինարարական աշխատանքի կարգավիճակը			
Ստուգվող փաստաթղթերը և գործունեությունը	<table border="1" style="width: 100%;"> <tr> <td style="width: 50%; text-align: center;">Կարգավիճակ</td> <td style="width: 50%; text-align: center;">Մեկնաբանություններ</td> </tr> </table>	Կարգավիճակ	Մեկնաբանություններ
Կարգավիճակ	Մեկնաբանություններ		

	Այո	Մասնակի	Ոչ	Ա/Պ
1. Բնական ռեսուրսների արդյունահանման լիցենզիայի առկայությունը կապալառուի մոտ				
2. Բետոնահանգույցի/ասֆալտի գործարանի շահագործման թույլտվություն կապալառուի մոտ				
3. Թափոնների վերջնական տեղակայման թույլտվության առկայությունը կապալառուի մոտ				
4. Աղբահան կազմակերպության հետ կենցաղային աղբի տեղափոխման պայմանագրի առկայությունը կապալառուի մոտ				
5. Աշխատանքային հրապարակը ցանկապատված է և ցուցացնող ցուցանակները փակցված են				
6. Աշխատանքները չեն խոչընդոտում հետիոտն և մեքենաների երթևեկությունը, կամ շրջանցումը սպահովված է				
7. Աշխատանքային ժամանակը պահպանվում է				
8. Շինարարական տեխնիկան և մեխանիզմները սարքին վիճակում են /գերնորմատիվային արտանետումներ, աղմուկ, ինչպես նաև քսայուղերի և վառելիքի արտահոսքեր չկան/				
9. Շինանյութերը և թափոնները տեղափոխվում են ծածկված վիճակում				
10. Գերնորմատիվային փոշոտվածության ժամանակ շինհրապարակը ջրցանվում է				
11. Կապալառուի շինճամբարը կամ բազան ցանկապատված են: Թափոնների ժամանակավոր կուտակման վայրը և տեխնիկայի կայանատեղին որոշված են				
12. Կապալառուի շինճամբարը սպահովված է ջրով և անհրաժեշտ սանիտարական պայմաններով				
13. Կապալառուի շինճամբարը կամ բազան սպահովված են առաջին բուժօգնության և հակահրդեհային պարագաներով				
14. Աշխատողները ապահովված են տեխնոլոգիական գործընթացներին անհրաժեշտ արտահագուստով և պաշտպանիչ միջոցներով (ձեռնոց, սաղավարտ, շնչադիմակ, ակնոց և այլն)				
15. Մեքենաների և տեխնիկայի սպասարկումը և լիցքավորումը իրականացվում է անթափանց հատակով տարածքում, որտեղ կարող են հավաքվել շահագործման և վթարային արտահոսքերը				

16.Մեքենաների և տեխնիկայի լվացումը կատարվում է ջրային ռեսուրսներից հեռու տեղանքում, բացառելով արտահոսքը դեպի ջրային ավազաններ					
17. Շինարարական աղբը տեղակայված է միայն հատուկ հատկացված վայրում					
18.Բնական շինանյութերի արդյունահանումը կատարվում է խստորեն ըստ հատկացված լիցենզիայի պահանջների					
19.Հողային աշխատանքների ընթացքում առաջացած հողի մնացորդները և բուսաշերտը պահեստավորված են առանձնացված տեղում և օգտագործվում են ետլիցքի և տարածքի բարեկարգման համար					
20.Աշխատանքները դադարեցվում են մշակութային, պատմական կամ ճարտարապետական հուշարձանների կամ իրերի հայտնաբերման պարագայում, որի մասին տեղեկացվում են մշակութային ժառանգության պահպանության պատասխանատու պետական մարմինները					
21.Գործունեության ավարտից հետո կապալառուի շինճամբարը և բազան մաքրված են աշխատանքների արդյունքում առաջացած մնացորդներից և բարեկարգված են շրջակա միջավայրի հետ ներդաշնակ					
22. Շինհրապարակում Covid- ի պատրաստվածության միջոցառումների իրականացման կարգի պահպանում					

Հավելված 4. Վարակների կանխարգելման և վերահսկման գործելակարգ

(տեղայնացված են Հիվանդությունների վերահսկման կենտրոնի (ՀՎԿ) վարակի կանխարգելման և վերահսկողության միջանկյալ ուղեցույցները՝ հաստատված COVID-19-ով վարակված հիվանդների կամ առողջապահական հաստատություններում հսկողության տակ գտնվող COVID-19-ով անձանց համար)

Առողջապահական կարգավորումներ

Նվազագույնի հասցնել ազդեցության հավանականությունը (անձնակազմի, այլ հիվանդների և այցելուների համար)

- Ժամանելուն պես, համոզվեք, որ ցանկացած շնչառական վարակի ախտանիշներով հիվանդները պետք է բուժհաստատության (ԲՀ) առանձին, մեկուսացված և լավ օդափոխվող հատվածում սպասեն, և կրեն դեմքի դիմակ
- Այցի ընթացքում համոզվեք, որ բոլոր հիվանդները պահպանում են շնչառության հիգիենան, հազի վարվելակարգը, ձեռքերի հիգիենան և մեկուսացման ընթացակարգերը: Տեղական լեզվով պատկերներով պարզ նշանների օգնությամբ արեք բանավոր ցուցումներ գրանցման վերաբերյալ և մշտական հիշեցումներ
- Ապահովեք ալկոհոլային հիմքով ձեռքի մաքրող միջոցների (60-95% ալկոհոլ), անձեռոցիկների և դեմքի դիմակներ առկայությունը սպասարահներում և հիվանդների սենյակներում:
- Հնարավորինս մեկուսացրեք հիվանդներին: Եթե առանձին սենյակներ մատչելի չեն, բոլոր հիվանդներին առանձնացրեք վարագույրներով: Նույն սենյակում տեղավորեք միայն COVID-19-ով վարակված և վերջնական ախտորոշված հիվանդներին: Ոչ մի այլ հիվանդ չի կարող գտնվել նույն սենյակում:

Հավատարիմ մնալ ստանդարտ կանխարգելիչ միջոցներին

- Վերապատրաստեք ամբողջ անձնակազմին և կամավորներին ստանդարտ կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ - ենթադրեք, որ բոլորը պոտենցիալ վարակված են և պետք է վարվել համապատասխանաբար
- Նվազագույնի հասցնել հիվանդների և ԲՀ-ի այլ անձանց շփումը՝ բուժաշխատողները պետք է լինեն միայն այն անձինք, ովքեր անմիջական կապ ունեն հիվանդների հետ, և դա պետք է սահմանափակվի միայն հիմնական անձնակազմով
- Մեկուսացման նախնական միջոցները դադարեցնելու մասին որոշումը պետք է ընդունվի յուրաքանչյուր դեպքի համար՝ տեղական առողջապահական մարմինների հետ համատեղ:

Անձնակազմի պատրաստում

- Վերապատրաստեք ամբողջ անձնակազմին և կամավորներին COVID-19-ի ախտանիշների վերաբերյալ, թե ինչպես է այն տարածվում և ինչպես է անհրաժեշտ պաշտպանվել: Ուսուցանել անհատական պաշտպանիչ միջոցների ճիշտ օգտագործման և հեռացման վերաբերյալ, ներառյալ ձեռնոցները, զգեստները, դիմակները, աչքերի պաշտպանությունը և շնչառական միջոցները (առկայության դեպքում) և ստուգեք, որ նրանք հասկացել են
- Հավաքարարներին վերապատրաստեք ԲՀ-ը մաքրելու ամենաարդյունավետ գործընթացի/ձևի վերաբերյալ: Օգտագործեք ալկոհոլի բարձր պարունակությամբ մաքրող միջոցներ՝ բոլոր մակերեսները սրբելու համար: Գործիքները լվանալ օճառով և ջրով, ապա սրբել ալկոհոլի բարձր պարունակությամբ մաքրող միջոցով, աղբը թափել այրման միջոցով և այլն:

Կառավարեք այցելուների հոսքը

- Սահմանել այցելուների կառավարման, մոնիտորինգի և ուսուցման կարգը
- Բոլոր այցելուները պետք է հետևեն շնչառական հիգիենայի կանխարգելիչ միջոցներին ԲՀ-ն ընդհանուր տարածքներում գտնվելու ժամանակ, հակառակ դեպքում նրանք պետք է հեռացվեն
- Սահմանափակել այցելուներին COVID-19-ով հիվանդների հաստատված կամ կասկածելի դեպքերի սենյակներ մուտք գործելը: Այլընտրանքային հաղորդակցությունը պետք է խրախուսվի, օրինակ՝ բջջային հեռախոսներով: Բացառությունները միայն մահացողների և հուզական խնամքի կարիք ունեցող երեխաների համար են: Այս պահին այցելուները պետք է օգտագործեն անձնական պաշտպանիչ միջոցներ:

- Բոլոր այցելուները պետք է պլանավորվեն և վերահսկվեն, և ԲՀ-ն ներսում միանգամից հանձնարարվի սահմանափակել նրանց տեղաշարժը
- Այցելուներին պետք է խնդրել, որ առնվազն 14 օրվա ընթացքում ուշադիր լինեն ախտանիշների հանդեպ և հաղորդեն սուր հիվանդության նշանների ի հայտ գալուն պես:

Հավելված 5. Բուժհաստատություններում թափոնների հնարավոր տեսակները

Կոդ	Թափոնի տեսակ	Ազդեգատային և ֆիզիկական վիջակ	Ծագում
97010100 01 05 3	Մարդկային առողջության համար վտանգավոր բժշկական թափոններ (վարակիչ)	Պինդ	Առողջապահություն (լայն պրոֆիլ, մասնագիտացված հիվանդանոցներ, ծննդատներ, պոլիկլինիկաներ)
97010200 01 05 3	Ախտահանման թափոններ		Առողջապահություն (լայն պրոֆիլ, մասնագիտացված հիվանդանոցներ, ծննդատներ, պոլիկլինիկաներ)
97010400 01 05 3	Բժշկական թափոններ, որոնք ռիսկային են վնասվածքների կամ վարակների տեսանկյունից	Պինդ	Առողջապահություն (լայն պրոֆիլ, մասնագիտացված հիվանդանոցներ, ծննդատներ, պոլիկլինիկաներ)
97010800 13 05 3	Օգտագործված մեկանգամյա օգտագործման ներարկիչներ	Իրենց հատկությունները կորցրած վերջնական ապրանքներ	Առողջապահություն (լայն պրոֆիլ, մասնագիտացված հիվանդանոցներ, ծննդատներ, պոլիկլինիկաներ)

9701030 01 05 4	Մարդու մարմին և ներքին օրգաններ	Պինդ	Առողջապահություն (լայն պրոֆիլ, մասնագիտացված հիվանդանոցներ, ծննդատներ, պոլիկլինիկաներ)
9701050 01 99 4	Սուր առարկաներ (նշտար, սկալպել)	Պինդ	Առողջապահություն (լայն պրոֆիլ, մասնագիտացված հիվանդանոցներ, ծննդատներ, պոլիկլինիկաներ)
9701060 01 05 4	Բժշկական թափոններ, որոնք առաջացել են բժշկական ծառայությունների տրամադրման արդյունքում (ախտորոշում, կանխարգելում, բուժում և ծննդաբերություն)	Պինդ	Առողջապահություն (լայն պրոֆիլ, մասնագիտացված հիվանդանոցներ, ծննդատներ, պոլիկլինիկաներ)
9701070 01 05 4	Կտրված կամ օգտագործված բժշկական ասեղներ	Պինդ	Առողջապահություն (լայն պրոֆիլ, մասնագիտացված հիվանդանոցներ, ծննդատներ, պոլիկլինիկաներ)
9701080 13 00 4	Բժշկական սարքեր և գործիքներ, որոնք չեն համապատասխանում որոշակի պահանջների, օրինակ՝ ջերմաչափեր, ախտորոշիչ գործիքներ, ներարկիչներ	Իրենց հատկությունները կորցրած վերջնական սարքեր	Առողջապահություն (լայն պրոֆիլ, մասնագիտացված հիվանդանոցներ, ծննդատներ, պոլիկլինիկաներ)
9701090 01 05 4	Այլ թափոններ, որոնց հավաքումն ու ոչնչացումը իրականացվում են հատուկ պահանջներին համապատասխան՝ վարակների տարածումը կանխելու նպատակով	Պինդ	Առողջապահություն (լայն պրոֆիլ, մասնագիտացված հիվանդանոցներ, ծննդատներ, պոլիկլինիկաներ)
9701190 01 00 4	Այլ թափոններ, որոնց հավաքումն ու ոչնչացումը չեն իրականացվում հատուկ պահանջներին համապատասխան՝ վարակների առաջացումը կանխելու նպատակով	Պինդ	Առողջապահություն (լայն պրոֆիլ, մասնագիտացված հիվանդանոցներ, ծննդատներ, պոլիկլինիկաներ)
9701390 01 00 4	Այլ բժշկական թափոններ՝ մարդու առողջության պաշտպանության համար	Պինդ	Առողջապահություն (լայն պրոֆիլ, մասնագիտացված հիվանդանոցներ, ծննդատներ, պոլիկլինիկաներ)

Հավելված 6. Վարակների վերահսկման և թափոնների կառավարման պլան /ձևանմուշ/

1. Ներածություն

1.1 Նկարագրեք ծրագրի համատեքստը և բաղադրիչները;

1.2 Նկարագրեք նպատակային բուժհաստատությունը (ԲՀ)։

- Տեսակը՝ օր.՝ ընդհանուր պրոֆիլի հիվանդանոց, կլինիկաներ, ստացիոնար/ամբուլատոր հաստատություն, բժշկական լաբորատորիա;

- *ԲՀ-ի հատուկ տեսակ՝ որպես արձագանք COVID-19-ին, օրինակ՝ առկա հաստատությունները կարող են սպասարկել դեռ չհաստատված դեպքերը հաստատելու կամ մեկուսացման համար;*

- Գործառնություններն ու պահանջները վարակի վերահսկման մակարդակի, օրինակ՝ կենսաանվտանգության մակարդակները;

- Տեղակայումը և հարակից օբյեկտները, ներառյալ մուտքը, ջրամատակարարումը, էլեկտրամատակարարումը;

- Հզորություն՝ մահճակալներ.

1.3 Նկարագրեք առողջապահական հաստատությունների նախագծման պահանջները, որոնք կարող են ներառել ընդհանուր նախագծման և անվտանգության բնութագրերը, հիվանդասենյակների առանձնացումը, ջեռուցումը, օդափոխությունը և օդարակումը, ավտոկլավները և թափոնների կառավարման օբյեկտները:

2. Վարակների վերահսկում և թափոնների կառավարում

2.1. ԲՀ-ում վարակների վերահսկման և թափոնների կառավարման նկարագիր

- ԲՀ-ում առաջացած բժշկական թափոնների (ԲԹ) տեսակը, ծագումը և ծավալը, ներառյալ պինդ, հեղուկ և օդի արտանետումները (եթե զգալի են);
- Դասակարգել և քանակական գնահատել ԲԹ-ը (վարակիչ թափոններ, աղտաբանական թափոններ, կտրուկներ, հեղուկ և ոչ վտանգավոր)՝ պահպանելով առողջապահական հաստատությունների համար WGB EHS ուղեցույցները և GIIP- ին վերաբերող;
- Հաշվի առնելով նոր կորոնավիրուսի վարակիչ բնույթը, որոշ թափոններ, որոնք ախտաբար դասվում են որպես ոչ վտանգավոր, կարող են համարվել վտանգավոր: Հավանաբար թափոնների ծավալը զգալիորեն կավերանա՝ հաշվի առնելով COVID-19 բռնկման ընթացքում ընդունված հիվանդների քանակը: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել առողջապահական թափոնների նույնականացմանը, դասակարգմանը և քանակականացմանը;
- Նկարագրել ԲՀ-ն ԲԹ-ի կառավարման համակարգը, ներառյալ նյութերի մատակարարումը, թափոնների առաջացումը, մշակումը, ախտահանումը և մանրէազերծումը, հավաքման, պահեստավորման, տեղափոխման, հեռացման և մաքրման աշխատանքները;
- Տրամադրել թափոնների հոսքերի աղյուսակ ԲՀ- ում, եթե առկա է;
- Նկարագրել առկա կիրառվող մակարդակները և / կամ ստանդարտները;
- Նկարագրել ինստիտուցիոնալ պայմանավորվածությունը, դերերը և պարտականությունները ԲՀ-ում՝ վարակների վերահսկման և թափոնների կառավարման նպատակով;

2.2 Կառավարման միջոցառումներ

- Թափոնների նվազագույնի հասցում, վերաօգտագործում և վերամշակում: ԲՀ- ն պետք է կիրառի թափոնների առաջացումը նվազագույնի հասցնելու պրակտիկան և ընթացակարգերը՝ չխախտելով հիվանդի հիգիենան և անվտանգության նկատառումները;
- Նմուշների, ռեակտիվների, դեղագործական և բժշկական պարագաների առաքում և պահպանում: ԲՀ-ն պետք է ընդունի պրակտիկա և ընթացակարգեր՝ նվազագույնի հասցնելու վտանգավոր բժշկական ապրանքների առաքման, ստացման և պահպանման հետ կապված ռիսկերը;
- Թափոնների տեսակավորում փաթեթավորում, գույների կոդավորում և պիտակավորում: ԲՀ-ն պետք է խստորեն իրականացնի թափոնների տեսակավորում՝ դեռ առաջացման կետում: Պետք է պահպանել թափոնների փաթեթավորման, գունային կոդավորման և պիտակավորման միջազգայնորեն ընդունված մեթոդները;
- Տեղում հավաքում և փոխադրում: ԲՀ-ն պետք է ընդունի պրակտիկա և ընթացակարգեր՝ պատշաճ փաթեթավորված և պիտակավորված թափոնները ժամանակին հեռացնելու համար՝ օգտագործելով հատու սայլակներ/սայլեր և ճանապարհներ: Պետք է պարբերաբար իրականացվեն համապատասխան գործիքների և տարածքների ախտահանման աշխատանքներ: Պետք է ապահովվել ներգրավված օժանդակ բուժաշխատողների՝ հավաքարարների, հիգիենան և անվտանգությունը;
- Թափոնների պահեստավորում: ԲՀ-ը պետք է ունենա թափոնների պահեստավորման բազմաթիվ վայրեր, որոնք նախատեսված են տարբեր տեսակի թափոնների համար: Նրանց գործառնություններն ու չափերը որոշվում են նախագծման փուլում: Պետք է իրականացվի պահեստային տարածքների պատշաճ պահպանում և ախտահանում: Համաձայն առկա զեկույցների՝ COVID-19 բռնկման ժամանակ վարակիչ թափոնները պետք է հեռացվեն ԲՀ-ի պահեստային տարածքից՝ 24 ժամվա ընթացքում;
- Տեղափոխումը և հեռացումը թափոնների կառավարման տեղամասերից դուրս: Ոչ բոլոր ԲՀ-ն ունեն համապատասխան պատշաճ այրման կայան: Բժշկական ոչ բոլոր թափոններն են հարմար այրման համար: Տեղում այրիչը այրվածքից հետո մնացորդներ է առաջացնում: Ուստի, հավանաբար, անհրաժեշտ են տեղական ինքնակառավարման մարմինների կամ մասնավոր հատվածի կողմից տրամադրվող թափոնների հեռացման օբյեկտներ: Թափոնների կառավարման այս արտաքին օբյեկտները կարող են ներառել այրիչներ, վտանգավոր թափոնների աղբավայր: Թափոնների կառավարման այդպիսի արտաքին օբյեկտների պատշաճ ստուգում պետք է իրականացվի՝ դրանց տեխնիկական համարժեքության, գործընթացի թողունակության, կատարողականի գրառման և օպերատորի կարողությունների ուսումնասիրման համար: Բացեր հայտնաբերելու դեպքում շտկող միջոցներ պետք է առաջարկվեն և համաձայնեցվեն կառավարության կամ մասնավոր հատվածի օպերատորների հետ;

- Կեղտաջրերի մաքրում. ԲՀ-ի կեղտաջրերի մաքրումը կապված է վտանգավոր թափոնների կառավարման փորձի հետ: Թափոնների պատշաճ տեսակավորումն ու մշակումը, ինչպես վերը քննարկվեց, պետք է իրականացվեն կոշտ թափոնների մուտքը կեղտաջրերի հոսք նվազագույնի հասցնելու համար: Այն դեպքում, երբ կեղտաջրերը թափվում են քաղաքային կոյուղու համակարգ, ԲՀ-ն պետք է ապահովի, որ կեղտաջրերի արտահոսքը համապատասխանի բոլոր կիրառելի թույլտվություններին և ստանդարտներին, իսկ քաղաքային կեղտաջրերի մաքրման կայանը՝ ի վիճակի լինի կարգավրել կեղտաջրերի արտանետումը: Այն դեպքերում, երբ քաղաքային կոյուղաջրերը չեն գործում, ԲՀ-ը պետք է կառուցի և պատշաճ կերպով ապահովի կեղտաջրերի մաքրման առաջնային և երկրորդային մակարդակի մաքրման աշխատանքները, ներառյալ ախտահանումը: Տեղում կեղտաջրերի մաքրման աշխատանքների մնացորդները, ինչպիսիք են տիղմը, նույնպես պետք է պատշաճ կերպով վերացվեն: Կան նաև դեպքեր, երբ ԲՀ կեղտաջրերը բեռնատարներով տեղափոխվում են քաղաքային կեղտաջրերի մաքրման կայան՝ մաքրման համար: Պետք է իրականացվեն անվտանգ փոխադրման պահանջները:

3. Արտակարգ իրավիճակների պատրաստվածություն և արձագանքում

ԲՀ-ում տեղի ունեցած արտակարգ միջադեպերը կարող են համարվել թափումը, վարակիչ նյութերի կամ ճառագայթահարման ազդեցությունը, դեպի շրջակա միջավայր վարակիչ կամ վտանգավոր նյութերի պատահական արտանետումը, բժշկական սարքավորումների անսարքությունը, պինդ թափոնների և կեղտաջրերի մաքրման կայանների անսարքությունը և հրդեհը: Այս արտակարգ դեպքերը, ամենայն հավանականությամբ, լուրջ ազդեցություն կունենան բուժաշխատողների, համայնքի, ԲՀ-ի գործունեության և շրջակա միջավայրի վրա:

Այսպիսով, առաջարկվում է մշակել արտակարգ իրավիճակների արձագանքման պլան, որը համարժեք կլինի ռիսկի մակարդակին:

4. Ինստիտուցիոնալ կարգավորումները և կարողությունների զարգացում

Պետք է ներառվեն հստակ սահմանված ինստիտուցիոնալ կարգավորումները, դերերն ու պարտականությունները: Պետք է մշակվի վերապատրաստման պլան՝ պարբերական վերապատրաստման ծրագրերով: Առաջարկվում են հետևյալ ասպեկտները.

- Սահմանեք շրթայի յուրաքանչյուր օղակի դերերն ու պարտականությունները վարակի վերահսկման և թափոնների կառավարման գործընթացում՝ սկզբից մինչև վերջ;
- Համոզվեք, որ համապատասխան և որակյալ անձնակազմն առկա է տեղում, ներառյալ վարակների վերահսկման և կենսաանվտանգության և թափոնների կառավարման օբյեկտի շահագործման պատասխանատուները;
- Շեշտել, որ ԲՀ-ն ղեկավարը լիարժեք պատասխանատվություն է ստանձնում վարակների վերահսկման և թափոնների կառավարման համար;
- Ներառելով ԲՀ-ի բոլոր համապատասխան բաժանմունքները՝ ստեղծել ներգերատեսչական թիմ՝ խնդիրները և կատարողականը կառավարելու, համակարգելու և պարբերաբար վերանայելու նպատակով;
- Ստեղծել տեղեկատվության կառավարման համակարգ ԲՀ-ում՝ թափոնների հոսքերին հետևելու և գրանցելու նպատակով;
- Կարողությունների զարգացմանն ու վերապատրաստմանը պետք է ներգրավվեն բուժաշխատողներ, թափոնների կառավարման աշխատողներ և հավաքարարներ: Թափոնների կառավարման երրորդ կողմի ծառայություններ մատուցողներին նույնպես պետք է տրամադրվի համապատասխան ուսուցում:

5. Մոնիտորինգ և հաշվետվություն

Չարգացող երկրներում շատ ԲՀ-ներ բախվում են բժշկական թափոնների հոսքերի ոչ պատշաճ մոնիտորինգի և գրառումների հետ: ԲՀ-ը պետք է ստեղծի տեղեկատվության կառավարման համակարգ՝ թափոնների հոսքերի առաջացման, տեսակավորման, փաթեթավորման, ժամանակավոր պահեստավորման, տրանսպորտային սայլերի/տրանսպորտային միջոցներից մինչև մաքրման կայաններ դիտելու և գրանցելու համար: ԲՀ-ը խրախուսվում է զարգացնել տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնված տեղեկատվության կառավարման համակարգ, եթե դրանց տեխնիկական և ֆինանսական կարողությունները թույլ տան:

Ինչպես վերը քննարկվեց, ԲՀ-ի ղեկավարը ստանձնում է ընդհանուր պատասխանատվությունը, ղեկավարում է միջգերատեսչական թիմ և պարբերաբար վերանայում է ԲՀ-ում վարակների վերահսկման և թափոնների կառավարման պրակտիկայի խնդիրները և կատարումը: Ներքին հաշվետվությունների և լրացման համակարգը պետք է առկա լինի:

Հաշվետվությունները պետք է համապատասխանեն կառավարության և Համաշխարհային բանկի պահանջներին:

Հավելված 7. Հանրային քննարկումների արձանագրություն

ՀԿՎ ծրագրի շրջանակներում հանրային քննարկումներ Արյունաբանական կենտրոնի վերակառուցման Բնապահպանական կառավարման կառուցվածքի և բնապահպանական կառավարման պլանի վերաբերյալ

24 դեկտեմբերի, 2012 թ.

Առողջապահության ազգային ինստիտուտ, ք. Երևան

Մասնակիցների ցանկ

- | | |
|-------------------------|---|
| 1. Վռամ Թևոյան | Տեղական խորհրդատու, շրջակա միջավայրի կառավարման մասնագետ |
| 2. Մենուա Բրուտըյան | Լոռու մարզի բնակիչների ասոցիացիա, բարեգործական հասարակական կազմակերպություն |
| 3. Խորեն Վարդանյան | Վանաձորի քաղաքային համայնքային խորհրդարանի անդամ |
| 4. Մարտա Սիմոնյան | Տարածաշրջանային համագործակցություն հասարակական կազմակերպություն |
| 5. Մելքոն Գարասեֆերյան | Արյունաբանական կենտրոնի բաժանմունքի վարիչ |
| 6. Էդուարդ Կարասակալյան | Արյունաբանական կենտրոնի բժիշկ |
| 7. Կարեն Մելիքսեյան | Արյունաբանական կենտրոնի բժիշկ |
| 8. Հայրապետ Գալստյան | Ուռուցքաբանության ազգային կենտրոնի տնօրեն |
| 9. Արմեն Թանանյան | Ուռուցքաբանության ազգային կենտրոնի փոխտնօրեն |
| 10. Արթուր Ավետիսյան | Ուռուցքաբան, Ուռուցքաբանության ազգային կենտրոն |
| 11. Արտակ Էդոյան | «Վանագոր» ԲԿ-ի փոխտնօրեն |

ԱԾԻԳ

- | | |
|---------------------------|--|
| 12. Նելսոն Չուլոյան | ԱԾԻԳ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար |
| 13. Դավիթ Մելիք-Նուբարյան | համակարգող, հիվանդանոցային ցանցի օպտիմիզացման բաղադրիչ |
| 14. Նաիրա Քալանթարյան | հիվանդանոցային ցանցի օպտիմալացման բաղադրիչի մասնագետ |
| 15. Ռուզաննա Աստվածատրյան | հիվանդանոցային ցանցի օպտիմիզացման բաղադրիչի համակարգողի օգնական, |

Ամփոփում

2012 թ. դեկտեմբերի 24-ին Առողջապահության ազգային ինստիտուտում անցկացվեցին հանրային քննարկումներ ՀԲ կողմից ֆինանսավորվող «Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» նոր ծրագրի շրջանակներում իրականացվող Արյունաբանական կենտրոնի վերակառուցման Բնապահպանական կառավարման կառուցվածքի և բնապահպանական կառավարման պլանի վերաբերյալ՝ տեղական հասարակական կազմակերպությունների, շահագրգիռ կողմերի, համայնքի անդամների, տեղական ինքնակառավարման մարմինների, ԱՆ և ԱԾԻԳ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Բացման խոսքում ԱԾԻԳ տնօրեն Նելսոն Չուլոյանը համառոտ ներկայացրեց «Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ծրագրի հիմնական բաղադրիչներն ու նպատակները: Նա նշեց, որ ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերումը կիրականացվի սկրինինգային ծրագրի միջոցով: Բացի այդ, կիրականացվեն Լոռու մարզի Վանաձորի ԲԿ-ի նոր մասնաշենքի կառուցման, ինչպես նաև Արյունաբանության

կենտրոնի արդիականացման՝ այդ թվում ՈՓԲ բաժանմունքի ստեղծման, աշխատանքները: Ծրագրի շրջանակներում կստեղծվի ուռուցքաբանության նոր կենտրոն՝ նոր շենքի կառուցմամբ:

Այնուհետև բնապահպան Վռամ Թևոսյանը ներկայացրեց «Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ծրագրի Բնապահպանական կառավարման կառուցվածքը և Արյունաբանական կենտրոնի վերակառուցման աշխատանքների ԲԿՊ-ն: Նա նշեց, որ այդ փաստաթղթերը մշակվել են Համաշխարհային բանկի գործառնական ձեռնարկի պահանջների համաձայն, որը ներկայացնում է ՀԲ բնապահպանական քաղաքականությունը: Այնուհետև պարոն Թևոսյանը նշեց, որ նշված փաստաթղթերում նախնական ուսումնասիրվել և գնահատվել են երեք նախագծերի շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը: Փորձագետը հայտնեց, որ կանխատեսվում է, որ շրջակա միջավայրի վրա սպասվող ազդեցությունը կլինի նվազագույն:

- Ուռուցքաբանության ազգային կենտրոնի տնօրենը հարցրեց շահագործման փուլում նոր ուռուցքաբանական կենտրոնի շենքի վրա ստորերկրյա ջրերի հնարավոր ազդեցության մասին:

Բնապահպան Վռամ Թևոսյանը պատասխանեց, որ ճառագայթային թերապիայի կենտրոնի նախագծման և կառուցման ընթացքում պետք է հաշվի առնվեն նորմերն ու շրջակա միջավայրի պահպանության պահանջները:

- Բնապահպանական խնդիրներին վերաբերող այլ հարցեր չկային: Քննարկումը շարունակվեց նոր ծրագրի շրջանակներում նախատեսվող սկրինինգային հետազոտությունների վերաբերյալ: Ուռուցքաբանության ազգային կենտրոնի տնօրեն Գալստյանը մտահոգված էր սկրինինգի ընտրության հնարավորություններով: Նրա կարծիքով, կրծքագեղձի քաղցկեղի գնումը Հայաստանում ավելի կարևոր է, քան այն ներառված չէ ծրագրում:

Համակարգող Մելիք-Նուբարյանը պատասխանեց, որ նոր ծրագրի նախնական տարբերակում կրծքագեղձի քաղցկեղի գնումը ներառվել է սկրինինգային հետազոտությունների ցանկում, սակայն ֆինանսական սահմանափակումների պատճառով այն հանվել է ծրագրից:

Վերջում ԱԾԻԳ տնօրեն Նելսոն Չուլոյանը շնորհակալություն հայտնեց մասնակիցներին քննարկմանը մասնակցելու համար:

Մասնակիցների ստորագրությունները սկանավորված տարբերակով ներկայացված են կից:

Վոսան Թևոսյան

Մանուկ Բրուտյան

Խորեն Վարդանյան

Սիմոնյան Մարթա

Մելքոն Գարսեֆերյան

Եղաարդ Կաթասակյան

Կարեն Մելիքսեբյան

Հայրապետ Գալստյան

Թմանյան Արմեն

Արթուր Ավետիսյան

Արտակ Եղոյան

Նելսոն Զուլոյան

Դավիթ Մելիք-Նուբարյան

Քաղանթարյան Նաիրա

Ռուզաննա Աստվածատրյան